AZG NEW PDF.qxd 16/08/2010 21:07 Page 1

Azg Վազ

17 ՕԳՈՍՏՈՍ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 146 (4526)

ISSN: 1829-1651

Գների չհիմնավորված բարձրացման երկու պատճառ

Մեկը մյուսով պայմանավորվա՞ծ, թե՞ մեկը մյուսից անկախ

Ալյուրի եւ հացի գների բարձրացումը Հայաստանում մեկ անգամ եւս ցույց տվեց, որ այս առումով մեզ մոտ ազատ մրցակցությունը խաթարված է: Խոսքն այն մասին է, որ միջազգային գների բարձրացումը, սովորաբար, անմիջապես՝ օրեր եւ անգամ ժամեր անց արտացոլվում է մեզ մոտ, իսկ նույն միջազգային գների իջեցումը տեղ է հասնում միայն ամիսներ անց: Այս անգամ եւս, ալյուրի միջազգային գների բարձրանալուց մի քանի օր անց, երբ գործնականում անհնար էր, որ այս ապրանքի նոր խմբաքանակներ ներկրված լինեին, նախկին գնով ներմուծված ալյուրի գները բարձրացան: Ինչո՞ւ է այդպես եւ հնարավո՞ր է, որ երբեւէ մեզ մոտ նույնպես այս առումով գործեն շուկայական կանոնները եւ գները:

Տես էջ 3

ՌԴ նախագահի առաջիկա պեսական այցը Հայաստան

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով օգոստոսի 19-ին պեսական այցով Երեւան կժամանի Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը տիկնոջ՝ Սվետլանա Մեդվեդեւայի հետ:

Հայաստանի նախագահի մամուլի ծառայությունից հայտնում են, որ ՌԴ նախագահը կայցելի Ծիծեռնակաբերդ՝ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, որտեղ ծաղկեպսակ կդնի Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին: Այնուհետեւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի անունից՝ ի պատիվ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի, նախագահի նստավայրում կտրվի պաշտոնական ճաշ:

Օգոստոսի 20-ին նախատեսվում է Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների առանձնազրույցը, որին կհաջորդեն երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ ընդլայնված կազմով բանակցություններ: Կստորագրվեն հայ-ռուսական ռազմավարական համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանն ուղղված մի շարք պայմանագրեր եւ համաձայնագրեր: ՀՀ նախագահի նստավայրում այնուհետեւ տեղի կունենա Սերժ Սարգսյանի եւ Դմիտրի Մեդվեդեւի համատեղ մամուլի ասուլիսը:

ՌԴ նախագահի պեսական այցի շրջանակներում ՀՀ եւ ՌԴ նախագահները կայցելեն Գյումրի՝ մասնակցելու «Պատվո բլուր» հուշահամալիրի բացման հանդիսավոր արարողությանը:

Պեսական այցի ավարտին Ռուսաստանի նախագահը կմասնակցի նաեւ Հավատարիմ անվտանգության պայմանագրի կազմակերպության անդամ-երկրների ղեկավարների՝ օգոստոսի 20-22-ը Հայաստանում անցկացվելիք ոչ պաշտոնական գագաթաժողովին:

(Այս մասին այլ մանրամասնություններ՝ 8-րդ էջում):

Հ. Ա.

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԴԵՀՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ

Ռուսաստանի հայերի միության հայտարարությունը

Հրդեհների հանգեցրած բնության անկանոն երեւույթների հետեւանքով Ռուսաստանի տարբեր շրջաններում զոհվեցին հինգ տասնյակ անձինք, հազարավոր մարդիկ զրկվեցին օթեւանից եւ ունեցվածքից, մոխրացավ մոտ 2000 տուն:

Ռուսաստանի հայերի միությունը, գլխավորությամբ իր նախագահ Արա Աբրահամյանի, ցավակցում է զոհվածների ընտանիքներին եւ անկեղծորեն կարեկցում տուժածներին:

ՌԴ քաղաքացի մեր հայրենակիցները, ինչպես Ռուսաստանի ամբողջ ժողովուրդը, ցավով ընդունեցին միանգամից ամեն ինչ կորցրած մարդկանց ողբերգությունը եւ պատրաստակամություն են հայտնում ուժերի համեմատ օգնելու հրդեհներից տուժածներին:

Ծառջաններ, մասնավորապես Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կալուգայի եւ Վոլգոգրադի մարզերի, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի եւ այլ վայրերի հայկական համայնքները սկսել են հանգանակել տուժած ընտանիքներին անհրաժեշտ միջոցներ եւ ունեցվածք:

Առ այսօր արդեն հանգանակված է ավելի քան 7 մլն ռուբլի եւ հավաքված է մոտ 100 տոննա մարդասիրական օգնություն (շինանյութ, տնտեսական առարկաներ, կենցաղային տեխնիկա եւ էլեկտրասարքեր, հագուստ եւ այլն), ընդամենը 188 անուն, ըստ որում՝ չօգտագործված:

Հինգշաբթի օրը՝ 2010 թ. օգոստոսի 12-ին, մարդասիրական օգնության առաջին քանակությունը (10

Գիտակցելով, որ մոլեգնած տարերքի ծանր հետեւանքները վերացնելու երկրի ղեկավարության աջակցության լայնընդգրկուն ծրագիրը պահանջում է նաեւ հանրային աջակցություն, ՌԴ մի շարք տարածաշրջանների, մասնավորապես Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Կալուգայի եւ Վոլգոգրադի մարզերի, Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի եւ այլ վայրերի հայկական համայնքները սկսել են հանգանակել տուժած ընտանիքներին անհրաժեշտ միջոցներ եւ ունեցվածք:

«Կամազ» բեռնատար) ուղարկվեց Վորոնեժի, Նիժնի Նովգորոդի եւ Ռյազանի մարզերի տուժած շրջաններ:

Միջոցների եւ ունեցվածքի հավաքման ակցիան շարունակվում է:

ԵՄ հատուկ ներկայացուցիչը Հարավային Կովկասում կգործի էլի կես տարի

Եվրոմիության Հարավային Կովկասում հատուկ ներկայացուցիչ Պիտեր Սեմնեբիի մանդատի ժամկետը երկարաձգվել է եւս կես տարով: Այդպիսով Սեմնեբին կմնա իր պաշտոնում մինչեւ 2011թ. օգոստոսի 31-ը:

ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատը երկարաձգվում է յուրաքանչյուր կես տարին մեկ: Այս իրադարձությունն ինքնին հետաքրքրություն չէր ներկայացնի, եթե չլիներ վերջերս ԵՄ արտաքին գործերը ներկայացնող Քեթրին Էշթընի հայտարարությունը, թե այս պաշտոնը վերացվելու է:

Ըստ այդ տեղեկության, ԵՄ-ը կարող է վերացնել հատուկ ներկայացուցչի պաշտոնը ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Մոլդովայում այն պատճառաբանությամբ, որ այդ տարածաշրջանները կներգրավվեն նոր ստեղծվելիք ԵՄ արտաքին դիվանագիտական ծառայության, ինչպես նաեւ արդեն իսկ գործող հատատությունների վերակազմավորված միավորների մեջ:

Ա. Հ.

«Մենք վստահ չենք, թե արդյոք Թուրքիան մնո՞ւմ է մեր դաշնակիցը»

Ասել է Օբաման Էրդողանին

Նախօրեին տեղի ունեցած Օբամա-Էրդողան հեռախոսազրույցի ժամանակ ԱՄՆ նախագահը, ինչպես տեղեկացնում է Financial Times-ը, պարզապես սպառնացել է Էրդողանին: «Եթե Անկարան չփոխի իր քաղաքականությունը Իսրայելի եւ Իրանի նկատմամբ, ապա չեք ստանա ոչ մի ամերիկյան զենք, այդ թվում՝ անօդաչու ինքնաթիռներ, որոնցով հետաքրքրված եք»: Ամերիկյան անօդաչու ինքնաթիռները Անկարային անհրաժեշտ են Հյուսիսային Իրաքի քրդական խմբավորումների վրա հարձակումների համար: Օբաման նաեւ ընդգծել է, որ ԱՄՆ իշխանական վերնախավում, այդ թվում՝ առաջին հերթին Կոնգրեսում, Թուրքիայի վերջին քայլերից հետո այնքան էլ վստահ չեն՝ «արդյոք Թուրքիան շարունակո՞ւմ է մնալ մեր դաշնակիցը: Այս կապակցությամբ, ես կարծում եմ, շատ դժվար կլինի ստանալ Կոնգրեսի համաձայնությունը՝ ձեր երկրին զենք վաճառելու առումով», շեշտել է ԱՄՆ նախագահը: Ամերիկյան թերթը նաեւ հիշեցրել է, որ Օբամայի դժգոհությունը թուրքական իշխանություններից դեռեւս նկատելի էր G20-ի վերջին գագաթաժողովի ընթացքում, երբ ԱՄՆ նախագահը բացեիբաց հայտարարեց Թուրքիայի վարչապետին, որ Անկարան սխալ է կատարել՝ դեմ քվեարկելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ Իրանի դեմ ուղղված նոր պատժամիջոցների սահմանմանը: Անկարայից ամերիկյան դժգոհությունները նաեւ հիմնավորվում են «Ազատության» նավատորմի նկատմամբ Անկարայի դիրքորոշմամբ: «Թուրքերը դեռ պետք է ապացուցեն մեզ, որ ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ են վերաբերվում ԱՄՆ-ի հետաքրքրություններին ու անվտանգությանը», հայտարարել է Սպիտակ տան ներկայացուցիչը Financial Time-ին:

Հ. Ա.

Անկարան ու Բաքուն «ռազմավարական փոխադարձ օգնության» համաձայնագիր ստորագրեցին

Գյուլը մինչեւ Բաքու հասնելը խոսում է ԼՂ խաղաղ կարգավորումից

Թուրք-ադրբեջանական հարաբերություններն ավելի հաճախ հայտարարվում են եղբայրական, իսկ գործնականում լինում են ինչպես այդպիսին, այնպես էլ «խութերով»: Ամեն դեպքում, պաշտոնական մակարդակում հանդիպումների առումով եղբայրությունն ու նման այլ կատեգորիաները դրսեւորվում են երկու երկրների միջեւ ստորագրվող փաստաթղթային ընդարձակ դաշտին ավելացվող նոր ստորագրություններով:

Ինչպես տեղեկացնում է «Ազերթաջ» գործակալությունը, երեկ Բաքու այցելած Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը իր ադրբեջանցի գործընկերոջ հետ վերջինիս նստավայրում ստորագրեց «ռազմավարական փոխադարձ օգնության» համաձայնագիր:

Մինչ կմեկներ Բաքու, դեռեւս Թուրքիայում՝ օդանավակայանում, Գյուլը խոսել է ղարաբաղյան խնդրից ու հայտարարել բավականին կրկնված ու ըստ էության անօգուտ այն պնդումը, թե այդ հարցը պետք է լուծվի «Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում»: Դեռ լավ է, որ Թուրքիան, գոնե ի լուր աշխարհի եւ հանուն բարեկրթության, հայտարարում է, որ հակամարտությունը պետք է լուծել խաղաղ ճանապարհով:

Ինչեւէ, մինչեւ այցելությունը հայտնի էր, որ Գյուլը Բաքվում ամենից առաջ պատրաստվում է քննարկել էներգետիկ համագործակցության հարցեր, որոնց առնչությամբ էլ երկու երկրները կստորագրեն համաձայնագիր: Գյուլի եւ Ադրբեջանի նախագահ Ալիեւ կրտսերի առանձնազրույցից բացի այցելության օրակարգում նախատեսված է նաեւ ավելի լայն կազմով քննարկում, որին թուրքական կողմից, մասնավորապես, մասնակցելու են Ադրբեջան այցելության ընթացքում Թուրքիայի նախագահին ուղեկցող արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն, էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Թաներ Յըլդըզը, որոշ պատգամավորներ, այլ պաշտոնյաներ:

Ընդլայնված կազմով հանդիպման ժամանակ էլ թուրք-ադրբեջանական ներկայացուցիչները պատրաստվում են քննարկել հայ-ադրբեջանական, հայ-թուրքական եւ ղարաբաղյան հարցերը: Հասկանալի է, որ սակայն հանդիպման միակ թեման չեն, առավել ընդգրկուն քննարկում է նախատեսված Բաքու-Թբիլիսի- Ջեյհան նավթամուղի եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի նախագծերին առնչվող հարցերի կապակցությամբ:

Ինչ վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթգծին, ապա այս առնչությամբ էլ օդանավակայանում արված հայտարարություններում Գյուլը կարեւորել է նախագիծը եւ եւս մեկ անգամ հավաստիացրել, որ 2007-ին մեկնարկած այս շինարարությունը նախատեսվում է ավարտել արդեն 2012-ին:

Հայ-ադրբեջանական թեմատիկայի շրջանակներում Թուրքիայի ածող հավակնությունը՝ ակտիվորեն ներգրավվելու ղարաբաղյան գործընթացում, հերթական դրսեւորումն է ունեցել նաեւ մինչ Բաքու այցելությունը ադրբեջանական «Ազերիպրես» գործակալությանը Գյուլի տված հարցազրույցում, որտեղ կրկին քննադատություն է հնչել ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելության գործունեության առնչությամբ՝ համանախագահների տարածաշրջանային այցելություններն անօգուտ որակելով:

Թուրքիայի նախագահի պաշտոնական այցելությունը նաեւ հետաքրքրական է այն առումով, որ դրան կհետեւի Ռուսաստանի նախագահի այցը Ադրբեջան արդեն սեպտեմբերի սկզբներին: Հասկանալի է, որ հայ-ադրբեջանական իրավիճակն ու ղարաբաղյան հարցում բանակցային գործընթացը, որում հատկապես վերջին շրջանում ամենայն ակտիվությամբ նախաձեռնություններ է իրականացնում Ռուսաստանը, հատատապես լինելու է Ադրբեջանի նախագահի հետ Մեդվեդեւի հանդիպման օրակարգային հարցերի շարքում:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

AZG NEW PDF.qxd 16/08/2010 21:25 Page 1

«Արցախի ընթերցողին ամենից շատ հետաքրքրում է հակամարտության լուծման գործընթացը»

Ասում է «Ազատ Արցախ» թերթի գլխավոր խմբագիրը

«Ազատ Արցախ» հանրապետական թերթը Լեռնային Ղարաբաղում լույս է տեսնում 1923 թվականից: 87 տարիների ընթացքում թերթն անցել է տարբեր դժվարությունների միջով: Ղարաբաղյան պատերազմի տարիներին նույնիսկ դադարեցրել է աշխատանքը: Չնայած դժվարին ճանապարհին ու առկա խնդիրներին՝ «Ազատ Արցախը» շարունակում է լույս տեսնել: Թերթի գլխավոր խմբագիր **Լեոնիդ Մարտիրոսյանը** նշում է, որ թերթը լուսաբանում է ինչպես պետական քաղաքականությունը, այնպես էլ սոցիալական, տնտեսական եւ հասարակական ոլորտներին առնչվող խնդիրները: «Արցախի ընթերցողին ամենից շատ հետաքրքրում է ղարաբաղյան հակամարտության լուծման գործընթացը, որին անդրադառնում է մասնավորապես «Խմբագրի սյունակ» հոդվածաշարը:

«Ազատ Արցախը» հրատարակվում է Ստեփանակերտում, բայց ունի թղթակիցներ ԼՂՀ տարբեր շրջաններում, որոնք հետեւում են շրջանների կյանքին: Հայերեն լեզվով թերթը լույս է տեսնում շաբաթական 3 անգամ, իսկ ռուսերեն՝ մեկ անգամ: Միայն հայերենով տպաքանակը հասնում է 650-ի, երկու

լեզվով միասին՝ 758-ի: Լեոնիդ Մարտիրոսյանն ասում է, որ ցածր տպաքանակի պատճառը տարածման խնդիրներն են. «Քաղաքի կրթականներում փիչ թե շատ վաճառվում է, մեր հիմնական խնդիրը շրջաններում է»: Գործակալությունները, որոնք տարածում են «Ազատ Արցախը», թերթը հասցնում են մինչեւ շրջկենտրոններ: «Գյուղեր տանել չեն կարողանում, որովհետեւ ճանապարհածախսն ավելի շատ է, քան թերթից ստացված եկամուտը: Ընդամենը 2-3 թերթ վաճառելու համար անհնարամաս է հասնել գյուղերը», բացատրում է գլխավոր խմբագիրը:

Լեռնային Ղարաբաղում «Ազատ Արցախը» վաճառվում է 70 դրամով, Հայաստանում՝ 100 դրամ: «Ամբողջ Հայաստանում մի բաժանորդ ունենք», ասում է Լ. Մարտիրոսյանը: Խմբագրությունը չունի իր սեփական տարածքը: «Մի քանի անգամ շենքից շենք ենք տեղափոխվել: Հիմա աշխատում ենք մի տարածքում, որը պատկանում է ԼՂՀ մշակույթի նախարարությանը», տեղեկացնում է խմբագիրը:

«Ազատ Արցախին» կարող են թղթակցել նաեւ լրագրության բաժնում սովորող ուսանողները: «Տղա ուսանողներն ընդհանրապես չեն թղթակցում, աղջիկները երբեմն են թղթակցում», նշում է Լ. Մարտիրոսյանը: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում տղաներին այնքան էլ չի հետաքրքրում լրագրողի մասնագիտությունը՝ չնայած «Ազատ Արցախը» վաստ չի վճարում լրագրողներին՝ յուրաքանչյուրին 65 հազար դրամ՝ չհաշված հոնորարները:

«Ազատ Արցախը» ունի նաեւ էլեկտրոնային կայք՝ հայերեն, ռուսերեն ու անգլերեն՝ www.artsakhtert.com:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտ-Երեւան

ԼՂՀ եւ ՀՀ նախարարները ստորագրել են հուշագիր

Անցյալ շաբաթ ԼՂՀ տնտեսական զարգացման նախարար **Կարեն Եսայանը** եւ Հայաստանի էկոնոմիկայի նախարար **Ներսես Երիցյանը** Ստեփանակերտում փոխըմբռնման հուշագիր են ստորագրել եւ ընդունել ոլորտային համագործակցության ծրագիր:

Ներսես Երիցյանը հույս է հայտնել, որ համագործակցության շրջանակներում հայաստանյան գործարարները, հատկապես ՓՄՁ ոլորտի ներկայացուցիչները, Արցախում անելիքներ կունենան: Հուշագրում ներառված հարցերը նախարարությունը մինչ այդ քննարկել է Հայաստանի բիզնես միջավայրի հետ եւ համապատասխան շահագրգռվածություն է նկատել: Համենայն դեպս, ըստ էկոնոմիկայի նախարարի, ԼՂՀ-ում գործունեություն ծավալելու նպատակադրությամբ հայաստանյան գործարարներ են հրավիրվելու Արցախ, որպեսզի նրանք կարողանան տեղում ծանոթանալ միջավայրին:

ԼՂՀ տնտեսական զարգացման նախարար Կարեն Եսայանի խոսքով, Արցախի տնտեսությունն արտերկրին ճանաչելի դարձնելն առայժմ հնարավոր է միայն Հայաստանի միջոցով, եւ համագործակցության ակտիվացումն այս տեսանկյունից եւս կարեւորվում է:

Առեւտրի բնագավառում Եվրոմիության հետ տարվող բանակցություններն անպայման կազդեն Արցախի տնտեսության վրա, համոզված են ոլորտի պատասխանատուները: Առաջիկայում տնտեսության զարգացման նպատակակետը կդառնա որակյալ եւ մրցունակ արտադրանքի թողարկումը, քանի որ Եվրոմիության եւ Հայաստանի միջեւ ակնկալվող առեւտրային հարաբերություններով ձեւավորվելու են նոր չափանիշներ, որից զերծ չպիտի մնա նաեւ Արցախը:

Այցի շրջանակներում երկու նախարարները հանդիպումներ են ունեցել ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչությունում եւ Արցախի պետհամալսարանում, որտեղ զրուցել են ճգնաժամային ու հետճգնաժամային խնդիրների կարգավորման շուրջը:

Հայաստանից ժամանած մասնագետներն այցելել են տարբեր ձեռնարկություններ, ծանոթացել դրանց արտադրական հնարավորություններին, իսկ Ստանդարտացման, չափագիտության եւ սերտիֆիկացման կենտրոնում փոխանցել են իրենց հետ բերած սարքավորումները:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Նորարարությունները հասանելի դարձնել հայ սպառողներին

«Վիվասել-ՄՏՍ»-ի նպատակների մասին ասել է Ռալֆ Յիրիկյանը

«Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանն** այն կարծիքն է հայտնել, որ դեպի հաճախորդների պահանջմունքները կողմնորոշված որեւէ ընկերության համար նորարարությունները պետք է լինեն հիմնական առաջնահերթությունը: Այդ մասին նա ասել է «Էռնեստ ընդ Յանգ» աուդիտորական ընկերության կողմից հրատարակվող Exceptional ամսագրին տված հարցազրույցում: Ռալֆ Յիրիկյանը նշել է նաեւ, որ իր ղեկավարած ընկերությունը ձգտում է հայ սպառողների համար հասանելի դարձնել գիտատեխնիկական առաջընթացի բոլոր նվաճումները, որոնք հասանելի են զարգացած երկրների բնակչությանը:

Խոսելով ընկերության կայացման առաջին փուլի մասին՝ «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը, որպես հիմնական բարդություն, նշել է մասնագետների անբավարարությունը, ավելացնելով, որ նախապատվությունը ինքը տվել է ուսանող երիտասարդությանը: «Նաեւ կորպորատիվ արժեքներն են ավելի լավ յուրացվում երիտասարդ տարիքում: Այդպիսի մոտեցման շնորհիվ մեզ հաջողվեց ձեւավորել համախոհների կոլեկտիվ, որն ունի ընդհանուր նպատակներ», մանրամասնել է Ռալֆ Յիրիկյանը:

Ա. Մ.

Մերժվել է Ժիրայր Սեֆիլյանի դիմումը

Ժիրայր Սեֆիլյանի քաղաքացիության իրավունքի պատշտպանության կոմիտեն տարածել է հաղորդագրություն, որ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունը 15.06.20102. մերժել է Արցախյան պատերազմի մասնակից, «Սարդարապատ» շարժման համակարգող Ժիրայր Սեֆիլյանի՝ ՀՀ-ում մեկ տարով կացության ժամանակավոր կարգավիճակ տանալու վերաբերյալ դիմումը:

Հաղորդագրությունում նշված է, որ ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչությունն այսուհետեւ չի ընդունելու Ժիրայր Սեֆիլյանի՝ ՀՀ քաղաքացիության դիմումը, որովհետեւ, ըստ վարչության ղեկավարության բանավոր պատճառաբանության, Ժ. Սեֆիլյանը ՀՀ-ում չունի կացության ժամանակավոր կարգավիճակ: Նշված վարչությունն առանց որեւէ պատճառաբանության որոշել է ՀՀ-ում կացության ժամանակավոր կարգավիճակ չտրամադրել Ժիրայր Սեֆիլյանին:

Ի. Պ.

Ցավակցություն

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը եւ «Ազգ» օրաթերթի խմբագրությունը իրենց ցավակցությունն են հայտնում Համբարձումյանների ընտանիքին՝
Անդրանիկ Համբարձումյանի
վաղաժամ մահվան կապակցությամբ:

Արմենական ՌԱԿ հանրապետական վարչություն
«Ազգ» օրաթերթ

ԱՐՑԱԽ

Լոռվա բնությունից հետո Երեւանը «քարե ջունգլի» է թվում

Դեպի չքնաղ Լոռի: Արշավականներիս խումբը սկզբում ուղեւորվեց դեպի Դսեղ: Դեբեդ գետի աջափնյա սարահարթի վրա է գտնվում Դսեղը, որտեղ ծնվել է մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Գյուղի մի գողտրիկ անկյունում է տեղակայված Հ. Թումանյանի տուն-թանգարանը,

որը Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի մասնաճյուղերից է: Ռոզա Ղազումյանը՝ տուն-թանգարանի վարիչը, տեղեկացրեց, որ տարեկան ունենում են 8-9 հազար այցելու՝ հազվադեպ օտարերկրացիներ: Թանգարանն ունի 159 հիմնական ցուցանմուշ: Շենքային պայմանները բարվոք վիճակում են, թանգարանը միայն մասնակի վերանորոգման կարիք ունի:

Լոռու մարզի մոտավորապես արեւելյան մասում է ընկած Լոռվա ձորը, որտեղով հոսում է Դեբեդը: Ռ. Ղազումյանի փոխանցմամբ՝ «Լոռվա ձոր» հայրենակցական միությունը հենց Լոռվա ձորում պատրաստվում է հիմնել «Լոռվա մեծերի այգին», որտեղ տեղադրվելու են Հրանտ Մաթեւոսյանի եւ Հովհաննես Թումանյանի հուշարձանները:

Քայլարշավ դեպի Քառասնից մանկանց վանք

Դուրս գալով թանգարանից՝ արշավականներս շարժվեցինք դեպի «Տախտեր» կոչվող վայրը, որտեղ էլ գտնվում է Դսեղի Քառասնից մանկանց վանքը: Ցավոք, եկեղեցին հիմա կիսավեր վիճակում է. պահպանվել են միայն չնչին մնացորդները: Այն կառուցվել է 13-րդ դարում, նախկինում ունեցել է ժամատուն, կացարաններ եւ օժանդակ շինություններ:

Այստեղ բնության ու հոգեւորի ներդաշնակությունը կրկին անգամ հիշեցնում են, որ բնությունից հեռանալով՝ հեռանում ես ինքդ քեզնից: Քաղաքային քաոսն ու կյանքի արագ ռիթմը ժամանակի ընթացքում սկսում են մոռանալ ասվածային ճշմարտությունը՝ մարդը բնության մի մասնիկն է: Երբ մոտենում ես բնությանը, այն բնությանը, որը մարդու ձեռքը դեռեւս չի հասցրել աղճատել, այդժամ բացահայտում ես քո ճշմարտությունը՝ ինչքան փիչ բան է պետք երջանիկ լինելու համար:

Ամեն անգամ, երբ արշավներից վերադառնում եմ Երեւան, մեր քաղաքն ինձ «քարե ջունգլի» է թվում:

Վանաձորի միջով վերադառնում ենք Երեւան

Վանաձորում առաջին զրուցակիցներիս հանդիպեցի Ս. Աստվածածին եկեղեցու բակում: Վանաձորի բնակիչներ 27-ամյա Հրանտն ու 29-ամյա Արայոմն իրենց կանանց հետ եկեղեցի էին եկել: Նրանք դժգոհեցին քաղաքի պայմաններից: Վանաձորի երիտասարդության ամենամեծ խնդիրն աշխատանք գտնելն է: «Երտասարդները չեն ուզում ապրել Վանաձորում, նույնիսկ նրանք, ովքեր աշխատանք ունեն ձգտում են կա՛մ Երեւան տեղափոխվել, կա՛մ ընդհանրապես հեռանալ Հայաստանից», ասաց Արայոմը:

Տեր Ներսես քահանա Ղազարյանը՝ Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր սպասավորը, նշեց, որ Վանաձորում մարդիկ հիմնականում զբաղված են առեւտրով: Ինչ վերաբերում է քաղաքի հոգեւոր կյանքին, Տեր Ներսեսի խոսքով՝ մարդիկ սկսել են ավելի շատ գալ եկեղեցի: Աղանդավորների թիվն էլ, բարեբախտաբար, չի ավելանում: «Վանաձորում, սակայն, հոգեւոր գրականության ու հոգեւորականների պակաս է նկատվում: Մայր Աթոռից սանում ենք հոգեւոր գրականություն, բայց քաղաքի համար դա բավարար չէ», հավելեց Տեր Ներսեսը:

Ի. Պ.
Դսեղ-Վանաձոր-Երեւան

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 16/08/2010 20:05 Page 1

Անցյալից

Քաղաքական ուժերի վերակազմավորում Հայաստանում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայաստանը լուրջ մարտահրավերի առաջ է կանգնելու 2012 թվականին, երբ հերթական անգամ անցկացնի խորհրդարանական ընտրություններ: Անցյալ ընտրությունների ժամանակ կոալիցիոն կառավարություն կազմվեց, որը պատշաճ ներդաշնակությամբ կարողացավ որոշ ժամանակ ղեկավարել երկիրը, որովհետեւ կոալիցիան կազմող խմբավորումների շահերը համընկնում էին: Սակայն աստիճանաբար ճեղքվածքներ առաջացան, եւ Դաշնակցությունը դուրս եկավ կոալիցիայից՝ դառնալով մասամբ անվանական ընդդիմություն, բայց իրականում շահագործելով ընծայված հնարավորությունները:

Իշխանության մյուս երեք կուսակցությունները որոշ ժամանակ միասնաբար աշխատեցին, սակայն անհամաձայնությունն ու անհամերաշխությունը վարակեցին նաեւ նրանց հարաբերությունները:

Թողնելով կոալիցիան՝ ՀՅԴ-ն այդուհանդերձ չմիացավ նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ստեղծած ՀԱԿ-ին, որն իսկական ընդդիմությունն է:

Ներկայումս Դաշնակցության ղեկավարները երազում են իրենց բարերար Ռոբերտ Քոչարյանի վերադարձի մասի, քանի որ նա էր, որ իր իշխանության ընթացքում բանից ազատեց ՀՅԴ առաջնորդներին եւ գործելու, ինչպես նաեւ որոշակի քաղաքական ուժ դառնալու հնարավորություն ընձեռեց նրանց: Այժմ Դաշնակցությունը հավատացած է, որ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի օժանդակությամբ կկարողանա իշխանության վերադարձնել նրան: Նման սցենարը փորձ է արվում իրականացնելու Հանրապետական եւ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունների միջեւ ծագած որոշ տարաձայնությունների ֆոնի վրա:

Սփյուռքում գործող կուսակցություններին Հայաստանում կասկածանքով են նայում: Խորհրդային ժամանակների ՀՅԴ-ի առասպելը այդպես էլ առասպել մնաց: Հայաստանի ժողովուրդը մերժեց ընդունել նրան: Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը ներքին պառակտումների հետեւանքով փլուզված է, հավանաբար ներկա վարչակազմի ջանքերով: Պետք է խոստովանել, որ Սփյուռքի կուսակցություններն ունեն իրենց ներքին տարաձայնություններն ու թերությունները, եւ Հայաստանի իրարահաջորդ իշխանությունները կարողացել են վարպետորեն օգտագործել դրանք՝ թուլացնելու կամ իսպառ վերացնելու համար այս կամ այն կուսակցությանը: Տեր-Պետրոսյանն, օրինակ, կարողացավ քայքայել ՀՅԴ-ին, բայց կուսակցությունը նրա հաջորդի ուժեղ մարտավարության շնորհիվ վերապրեց: Տեր-Պետրոսյանի նենգ խաղերն առավել արդյունավետ էին Ռամկավար կուսակցության բաժանման գործում: ՌԱԿ-ը դեռեւս մեծ ջանքեր է գործադրում վերականգնելու իր ներքին միասնությունը: Որպես ներքին գործերի նախարար այդ ժամանակ Սերժ Սարգսյանն էլ անուղղակիորեն նպաստել է այդ պառակտմանը, բայց հետագայում ափսոսացել:

ՌԱԿ-ը պառակտվեց, եւ պարզվեց, որ որոշ արկածախնդիր խմբավորումներ մեղսակից էին Դաշնակցության մեքենայություններին ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում: Այդ գործընթացում ՀՌԱԿ-ը ամբողջովին դուրս մղվեց քաղաքական կյանքից Հայաստանում, չկարողանալով վերջին յոթ տարիների ընթացքում մասնակցել որեւէ ընտրության:

Վերջապես անցյալ տարի Հայաստանի եւ Սփյուռքի ավանդական Ռամկավար ազատական կուսակցության առաջնորդները, միավորելով իրենց ջանքերը կարողացան վերակենդանացնել կուսակցությունը՝ հիմք դնելով Հայաստանում Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությանը, որին միացան Սփյուռքի ՌԱԿ-ի բոլոր առողջ հատվածները՝ կազմելով ՌԱԿ Համաշխարհային խորհուրդը:

Հուլիսի 17-ին Երեւանի Թեթեյան կենտրոնում տեղի ունեցավ Արմենական-ՌԱ կուսակցության երկրորդ համագումարը, որի առիթով կուսակցության ատենապետ **Հակոբ Ավետիքյանը** հարցազրույց տվեց **«Ազգ»** օրաթերթին՝ ուրվագծելով ներքին վերակառուցման զարգացումները կուսակցության, որն արդեն իր մասնաճյուղերն ունի Հայաստանի բոլոր մարզերում, բացի Գորիս եւ Ղափան քաղաքներից, որոնցում շուտով նոր ակումբներ կստեղծվեն: Ավետիքյանը հանգամանալից վերլուծել է այդ հարցազրույցում Հայաստանի քաղաքական կյանքը եւ Արմենական-Ռամկավար կուսակցությանը վերապահում է կարեւոր դերակատարություն՝ որպես հաշտարար ուժի, երկրի ծայրահեղորեն բեւեռացված հասարակական մթնոլորտում: Քաղաքական անտագոնիզմի այդ մթնոլորտն այնքան է բացարձակ, որ ընդդիմությունն ու վարչակազմը հավասարապես շահագործում են հօգուտ իրենց քաղաքական նպատակների այնպիսի կարեւորագույն հիմնախնդիրներ, ինչպիսիք են հայ-թուրքական հարաբերությունները, ղարաբաղյան հակամարտությունը, սոցիալական հարցերը եւ այլն: Ասում են՝ երկրի հարուստության 90 տոկոսը կենտրոնացած է 40 ընտանիքների ձեռքերում, մինչ ժողովրդի մնացած հատվածը տառապում է ծայրահեղ կարիքի մեջ: Արտագաղթը «արյունաքամ է անում» երկրի ժողովրդագրական կենսապատկերը:

Նման մթնոլորտում, երբ մարդիկ աշխատանք եւ տնտեսական բարեկեցության հնարավորություններ են փնտրում, ոչ մի գաղափարախոսություն չի կարող գրավել նրանց: Օլիգարխները իշխում են երկրին, եւ նրանցից շատերը խորհրդարան են մտել անձեռնմխելիություն, հետեւապես նաեւ առավել մեծ ազդեցություն ձեռք բերելու նպատակով:

Արմենական-ՌԱ կուսակցությունը ոչ մի օլիգարխի աջակցությունը չի վայելում, եւ դա քողարկված օրհնությունն է, կամ չարիք է, որն իր մեջ բարիք է պարունակում, քանի որ այդ ձեւով կուսակցությունը կարող է առավել սկզբունքային քաղաքականություն վարել՝ ձգտելով արդարության եւ տնտեսական բարեփոխումներ ապահովել երկրին եւ ժողովրդին:

Մինչեւ օրս կուսակցության ղեկավարությունը հրաժարակել է խորաթափանց վերլուծություններ երկրի տնտեսական եւ քաղաքական հարցերի շուրջը, ընդգծելով ինչպես կառավարությանը՝ վարչակազմին, այնպես էլ ընդդիմությանը: Օրակարգի առաջնահերթ խնդիրն է ժողովրդի ծանր վիճակի բարելավումը, որը կուսակցությանն ստիպելու է հետամուտ լինելու երկրում հաստատելու իսկական արդարություն եւ կայունություն: Իսկական ժողովրդավարությունը հետեւելու է դրանց: Աղքատ մարդկանց կարելի է գնել եւ ազդեցության տակ վերցնել: Ով շատ է վճարում, նրան էլ հետեւում է ժողովուրդը, առանց հասկանալու, որ այդ անձնավորությունը (կամ անձնավորությունները) միշտ չէ, որ հօգուտ իրեն՝ իր ժողովրդին է աշխատում:

Քանի որ օլիգարխներ չկան Արմենական-ՌԱԿ-ի շարքերում, բնական է, որ այդ կուսակցությունը հնարաւոր չի կարող տեղեր զբաղեցնել խորհրդարանում, որը բոլոր դրական գործողությունների ամբիոնն է: Ներկայումս կուսակցությունը փորձում է դաշինքի մեջ մտնել որեւէ կոալիցիայի հետ՝ առաջիկա ընտրություններին ընդառաջ:

Արմենականները ուժեղ պաշտպանություն են վայելում աշխարհասփյուռ ՌԱԿ կառույցների կողմից: Իսկ սփյուռքյան ՌԱԿ-ը իր ուժն ու ոգեւորությունը, իր ներշնչանքն է վերցնում արմենականներից, որոնց արմատները գնում են հետ՝ մինչեւ 1885 թվականը:

Մյուս կողմից՝ արմենականները վայելել են եւ շարունակելու են վայելել սփյուռքյան ՌԱԿ կառույցների պաշտպանությունը՝ հասնելու համար իրենց նպատակներին ու դառնալու Հայաստանում քաղաքական մի այնպիսի ուժ, որի հետ հաշվի են նստելու:

Դետրոյթ, ԱՄՆ

Գների չհիմնավորված բարձրացման երկու պատճառ

1-ին էջից

Ինչպես մի շարք այլ ապրանքային շուկաներում, այստեղ դեպքում նույնպես գործում են գերիշխող դիրք ունեցող սուբյեկտներ: Դրանցից մեկը «Ալեխ Գրիգ» ընկերությունն է, որը պատկանում է Աժ պատգամավոր Սամվել Ալեխանյանին: Որ այս ընկերությունն այլ ոլորտներում նույնպես գերիշխող դիրք ունի եւ հաճախ է այն չարաշահում, գաղտնիք չէ: Այստեղ ներմուծող մյուս ընկերությունը «Մանանա գրեյնն» է: Բնական է, որ մրցակցության բացակայությունն այստեղ պետք է ունենա նման հետեւանք: Բացատրությունը, թե ներմուծողներն անմիջապես են գները բարձրացնում, որ կարողանան արդեն բարձր գնով այլուր գնելու համար շրջանառու միջոցներ ունենալ, մեղմ ասած, անընդունելի են: Այդ հիմնավորումը ոչ մի քննադատության չի դիմանում, քանի որ այդ տրամաբանությամբ շարժվելու դեպքում հարց է առաջանում, թե ինչո՞ւ նույն տրամաբանությունը չի գործում միջազգային գների իջնելու ժամանակ: Չէ՞ որ այդ դեպքում էլ ավելի քիչ միջոցներ են անհրաժեշտ լինելու նոր խմբաքանակ գնելու համար, հետեւաբար գները կարելի է անմիջապես իջեցնել: Ինչը, սակայն, տեղի չի ունենում: Այսինքն՝ ակնհայտ է, որ գների անմիջական բարձրացման եւ շատ դանդաղ իջնելու հիմնական պատճառը կամ միայն գերիշխող դիրքի առկայությունն է, կամ հնարավոր հակամրցակցային համաձայնությունը երկու գերիշխող դիրք ունեցողների միջեւ: Իսկ տնտեսական մրցակցությունը պաշտպանելուն կոչված հանձնաժողովը, ճիշտ է, վարույթ է հարուցում, հետեւում գործընթացին, բայց ըստ էության միայն արձանագրողի դերում է լինում: Ընդհանրապես, այդ կառույցի գործառնությունները ոչ մի կերպ չեն դառնում այնպիսին, որ կարողանա կատարել այն, ինչի համար ստեղծվել է:

Միաժամանակ, գների տարորինակությունների պատճառը միայն գերիշխող դիրքի առկայությունն ու շարաշահումները չեն: Հայկական շուկայում հաճախ են եղել դեպքեր, երբ բոլոր առեւտրի օբյեկտներում այս կամ այն ապրանքի գները բարձրացել են ուղղակի աչքի առաջ, երբ դեռ ոչ նոր ապրանք է ստացվել, ոչ էլ մատակարարն է գները բարձրացրել: Հակառակ շուկայական տրամաբանության, երբ պետք է գտնվեին օբյեկտներ, որոնք նույնը կթողնեն գինը, որպեսզի բոլորն իրենցից գնումներ կատարեն, նման բան տեղի չի ունենում: Ընդհակառակը, գները շղթայաբար մայրաքաղաքում եւ մյուս բնակավայրերում բարձրացնում են բոլորը: Ստացվում է մի իրավիճակ, երբ չնայած բազմաթիվ առեւտրային օբյեկտների առկայությանը, շուկայում տեղի է ունենում հակամրցակցային համաձայնություն: Գուցե տարբ էլ սպասում են իրենց մատակարարների՞ կողմից գների սպասվող բարձրացմանը եւ գուցե ներմուծման ոլորտում գերիշխող դիրքի կամ դրա չարաշահման վերացման դեպքում նման երեւույթն էլ վերանա: Այդուհանդերձ, ներկա պահին, այլ բանով, քան առեւտրականներին բնորոշ ագահությամբ եւ պահից օգտվելու առիթը բաց չթողնելու մտածելակերպով, գների միաժամանակ բարձրացումը բացատրել հնարավոր չէ:

Այս ամենին մնում է միայն ավելացնել, որ ներկա պահին ե՛ւ գերիշխող դիրքի չարաշահման, ե՛ւ առեւտրի օբյեկտների կողմից գների չհիմնավորված բարձրացման երեւույթների դեմ պետությունը գործնականում ոչինչ չի կարողանում անել:

ԱԲԱ ՄԱԲՏԻԲՈՍՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

ՌԱԿ Հարավային Ամերիկայի մասնաճյուղերը ծրագրում են իրենց գործունեությունը

Հարավային Ամերիկայի տարածաշրջանում գործող ՌԱԿ չորս մասնաճյուղերի ներկայացուցիչները հուլիսի 10-ին Բուենոս Այրեսում հավաքվել են ծրագրելու եւ կազմակերպելու իրենց հետագա գործունեությունը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի հուլիսի 24-ի համարը:

Ընկերական եւ գործնական մթնոլորտում անցած հանդիպման ընթացքում Հարավային Ամերիկայի ՌԱԿ ատենապետ **Սերխիո Նահապետյանը**, ողջունելով բոլորին, կոչ է արել ակտիվորեն մասնակցելու քննարկումներին: Նահապետյանը Բուենոս Այրեսի նահանգային խորհրդարանի անդամ է, իսկ կուսակցությունն այնտեղ 1976 թվից հրատարակում է «Սարդարապատ» շաբաթաթերթը, որն այժմ մեծ տարածում ունի եւ ընթերցողների լայն շրջանակ:

Հանդիպման ավարտին Նահապետյանը տարեկան պարգեւներ է հանձնել նախկին ատենապետ Ավետիս Պարսամյանին, ՌԱԿ անդամ Հայկ Շահինյանին եւ հետմահու նաեւ Պաղտին Նահապետյանին՝ առ ի գնահատանք իրենց անձնվեր գործունեության:

Հ. Ծ.

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունում օրերս կայացած «Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի» հերթական նիստում քննարկելով նախարարի հրամաններով ձեւավորված աշխատանքային խմբերի ստուգումների արդյունքները եւ նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության եզրակացությունները ու լսելով համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթության ծրագրեր իրականացնող կազմակերպությունների պատասխանատուների պարզաբանումները, փակ, գաղտնի քվեարկությամբ որոշվեց ամբողջությամբ կասեցնել 7 բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզիաների գործողությունը: Դրանք են՝ Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ինստիտուտը, «Մյուդ» իրավաբանական ինստիտուտը, Արմավիրի «Արարատ» համալսարանը, «ԷյԱյ Յու» Արիա միջազգային համալսարանը, «Վանեվան» ինստիտուտը, Արտաշատի «Արտաշատ» համալսարանը:

Մինչ այդ արդեն դադարեցվել էր Մոնթե Մելքոնյանի անվ. համալսարանի լիցենզիայի գործողությունը: Առանձին մասնագիտությունների գծով կասեցվել են Երեւանի «Մենեջմենթի», «Գալիք», Լորիս Քալաշյանի անվ. հայկական բաց համալսարանի, Ավետիք Մկրտչյանի անվ. տնտեսա-իրավագիտական, Երեւանի «Էկոլոգիայի տնտեսագիտության եւ իրավունքի հայկական ինստիտուտի», «Երեւանի մշակույթի համալսարանի» լրագրություն, օտար լեզու եւ գրականություն, իրավագիտություն, ֆինանսներ, թարգմանչական գործ եւ այլ բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերը:

Նախարարությունը խոստանում է, որ կարգահանքի տվյալ կրթական ծրագրերում ընդգրկված բոլոր ուսանողների կրթության իրավունքը՝ հնարավորություն ստեղծելով իրենց կրթությունը շարունակելու ոչ պետական եւ պետական բուհերի նույն կամ հարակից մասնագիտությունների համապատասխան կուրսերում, լրացուցիչ քննություններ հանձնելուց հետո:

Մ. Մ.

AZG NEW PDF.qxd 16/08/2010 20:04 Page 1

Ղրիմում բավարարված ենք զգում, երբ հայկական հուշարձաններին փլուզման վտանգ չի սպառնում

Ղրիմագիտության գիտահետազոտական կենտրոնը ստեղծվել է 1995 թ: Կենտրոնում աշխատում է շուրջ 15 մասնագետ: Նրանք զբաղվում են Ղրիմի բազմազգ բնակչության անցյալի, ներկայի, արվեստի, մշակույթի, ազգագրության, հնագիտության հարցերով: Կատարված ուսումնասիրությունները հրատարակվում են առանձին հոդվածների, զեկուցումների կամ մենագրությունների տեսքով: Ղրիմագիտության գիտահետազոտական կենտրոնի պատմության, մշակույթի եւ հուշարձանների ուսումնասիրության բաժնի վարիչ Տաթեւիկ Սարգսյանը, հուշարձանագիտական աշխատանքներին զուգահեռ, ծավալել է նաեւ մանկավարժական գործունեություն: 2004 թ. Վարդգես Միքայելյանի ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ-ում պաշտպանեց «Հայկական հոգեւոր եւ մշակութային կենտրոնները Արեւելյան Ղրիմում (XIV-XV թթ.)» թեմայով թեզ՝ սպանալով պատմական գիտությունների թեկնածուի կոչում: Շուրջ երկու տասնյակ գիտական գրքերի հեղինակ է:

- Կենտրոնն ինչպիսի՞ աշխատանք է իրականացնում հայագիտության ուղղությամբ:

- Հայագիտական ուղղությունը կենտրոնում լուրջ հիմքերի վրա դրվեց միայն երկու հայ աշխատակիցների հաստատվելուց հետո: Նրանցից մեկը՝ Վլադիմիր Գրիգորյանցն, արդեն 10 տարի կենտրոնի տնօրենն է եւ ամեն կերպ աջակցում է հայագիտության առաջընթացին: Մյուսը՝ ես եմ:

Հայագիտական ուսումնասիրությունների կազմակերպումը հայ մասնագետների ներգրավմամբ ոչ թե պետական հոգածության արդյունք էր, այլ՝ պատահական զուգադիպությունների եւ անձնական շահագրգռվածության: Առանց մեզ էլ ղրիմահայոց անցյալին վերաբերող հետազոտություններ կատարվում էին տեղացի մասնագետների ուժերով, որոնք լեզվի չիմացության պատճառով ի վիճակի չէին օգտվել հայկական աղբյուրներից եւ միշտ չէ, որ ճիշտ եզրահանգումներ էին անում:

- Տեղի հայկական հուշարձաններն ինչպիսի՞ խնդիրների առաջ են կանգնած:

- Ղրիմում պահպանվել են 2 տասնյակ հայկական միջնադարյան եկեղեցական կոթողներ, հուշաղբյուրներ, ամրաշինական կառույցների մնացորդներ, բազմաթիվ խաչքարեր, տապանաքարեր, վիմագրեր, զարդաքար եւ արձանագիր բեկորներ, հնագիտության հուշարձաններ: Բուն եկեղեցական կառույցների համար «պահպանվել են» ասածն էլ հարաբերական է, քանի որ դրանց զգալի մասը քայքայվել է ու կանգնած է կործանման եզրին: Մյուսները հանձնվել են մասնավոր վարձակալների՝ Հայ առաքելական եւ ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներին, որոնք առանձնապես հետաքրքիր չեն դրանց պահպանության եւ գիտական վերականգնման խնդիրներին: Խնդրի մասին բարձրաձայնվում է, բայց օգուտ քիչ կա: Համապատասխան պետական մարմիններն ի վիճակի չեն ապահովելու դրանց վերականգնումը լուրջ գիտական մակարդակով (բացառություն էր միայն Սուրբ Խաչ վանքի վերականգնումը 1992-2001 թթ, որը, սակայն, 2008 թ. հարձեռ շինարարական աշխատանքների հետեւանքով խաթարվեց), եւ ոչ էլ ուժ ունեն վերահսկելու եւ արգելակելու ինքնագլուխ վարձակալի «գործունեությունը»: Եվ բավարարվելով նրանով, որ հուշարձանի նոր տերը գոնե կանխում է փլուզման վտանգը, աչք են փակում թույլ տրված պատմական ժամանակաշրջանին, ոճին, ճաշակին անհարիր նորամուծությունների վրա: Այս ցավը բնորոշ է ոչ միայն Ղրիմին ու ողջ Ուկրաինային, այլեւ նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետություններին, այդ թվում՝ Հայաստանին, ուր ամեն քայլափոխի հանդիպում ենք պատմական ժառանգության ավերման եւ խեղաթյուրման աղաղակող փաստերի: Պատճառը միայն պետական մարմինների անկարողության կամ լուռ հովանավորության մեջ չէ, այլ՝ համատարած տգիտության: Ահռելի հուշարձանային մշակույթի ժառանգորդը լինելով հանդերձ՝ չգիտենք եւ չենք հարգում մեր հուշարձանները: Դպրոցական եւ բուհական ծրագրերը նվազագույն հնարավորություն անգամ չստեղծեցին հուշարձանագիտությունը ուսումնասիրելու համար, որպեսզի երիտասարդներն իմանային ինչ է խաչքարը եւ կարողանային ընթերցել պարզագույն արձանագրերը: Կորցրեցինք անմիջական կապն անցյալի հետ եւ պատմական արժեքները դարձրեցինք զուտ մասնագետների իմացության ու ցավի առարկա: Եվ պատահական չէ, որ մերօրյա նույնիսկ հոգեւորականը կարող է նայել աչքերիդ մեջ եւ խրախուսանք հայցող խանդավառությամբ ցույց տալ միջնադարյան եկեղեցու՝ սինթետիկ շինանյութով «վերականգնված» դուռն ու լուսամուտը կամ «խալիչա» հատակը՝ փռված վերջին մոդայի հախճապալիկի վրա:

- Աջակցություն Ուկրաինայի կամ Հայաստանի հանրապետություններից ստանո՞ւմ եք:

- Հիմնարկը պետական հաստատություն է՝ պետության հաստատագրած հաստիքներով եւ աշխատավարձով: Հազվադեպ կարողանում ենք պետական ֆինանսավորում հայթայթել այս կամ այն գրքի հրատարակության համար: Որեւէ այլ կարգի օգնություն տեղական իշխանություններից, առավել եւս՝ Կիեւից կամ Հայաստանից, չենք ստանում: Անհատ բարեգործներ չունենք, սակայն եթե մեկը, գիտակցելով մեր գործի կարեւորությունը, օգնություն առաջարկեր՝ միայն շնորհակալ կլինեինք: Այսուհանդերձ, եղածից էլ գոհ ենք: Պատկերացնո՞ւմ եք ինչ է նշանակում օտար հողում, պետական հաստատության մակարդակով կարողանալ ուսումնասիրել հարազատ պատմության եւ մշակույթի մի կարեւորագույն ճյուղը, հնարավորություն ունենալ ցույց տալու այդ մշակույթի խորեւ տարածուն ազդեցությունը տեղական ավանդույթների վրա եւ գերակա դերը տեղի միջնադարյան շինարարական արվեստում:

- Ձեր խոսքերից ենթադրում եմ, որ պայմանները բավարար չեն:

- Անշուշտ բավարար չեն: Կուզենայինք ունենալ մեր ամսագիրը, ֆինանսավորում ստանալ տարեկան գոնե մեկ մենագրություն հրատարակելու համար, կցանկանայինք ավելի հաճախ գործուղումների մեկնել, գիտաժողովների ու կլոր սեղանների մասնակցել: Այդ ամենն անում ենք մեր հաշվին: Տարեկան մեկ անգամ 1-2 ամսով Հայաստան եմ գալիս՝ Մատենադարանում եւ Ազգային գրադարանում աշխատելու: Դա օդի պես անհրաժեշտ է: Սակայն դա անում եմ սեփական նախաձեռնությամբ եւ միջոցներով:

- Ղրիմագիտության հայկական ուղղության մեջ ի՞նչ նորություններ կան:

- «Պատմական անցյալ» ղրիմյան ամսագրի 2004-2009 թվերի համարներում հայագիտությանը նվիրված մի շարք հոդվածներ հրատարակեցինք: Դրանք հետաքրքրության արժանացան եւ խթանեցին տեղացի ոչ հայ մասնագետների աշխատանքն այս բնագավառում: Այնքան, որ հետագա համարներն ընդգրկում էին ղրիմահայերին եւ ղրիմահայոց մշակույթին նվիրված գոնե 1-2 հոդված: 2008 թվին ես եւ ամուսինս՝ ճարտարապետ Մերուժան Պետրոսյանը, հրատարակեցինք Ղրիմի երբեմնի աթոռանիստ Սուրբ Խաչ վանքին նվիրված ռուսերեն մենագրություն, որն անդրադառնում է վանքի պատմության, ճարտարապետության, վիմագրության եւ վերականգնողական աշխատանքների խնդիրներին: Նույն տարում, պետական ֆինանսավորմամբ, հրատարակվեց Ղրիմին եւ հարակից շրջաններին վերաբերող XIV-XV դարերի հայերեն ձեռագրային հիշատակարանների համահավաքը՝ ռուսերեն թարգմանությամբ: Սա շուրջ 10 տարվա աշխատանքի արդյունքն էր, որն արդեն լրացվելու եւ շտկվելու կարիք ունի: Նախատեսել ենք երկրորդ հրատարակությունը: 2009 թվին ավարտել ենք Ղրիմի Բելոգորսկի շրջանի երեք հայկական կիսավեր եկեղեցիների (սրանք պատկանում են Ուկրաինայի ամենաբարձր՝ «ազգային» կարգավիճակի հուշարձանների թվին) լիարժեք գույքագրումը, ինչը թույլ կտա մոտ ապագայում անցնել դրանց վերականգնմանը: 2010 թվին ձեռնարկել ենք IV-VII դարերի ղրիմյան մի քանի՝ հավատի համար նահատակված հայերի հայերեն վարքերի ուսումնասիրությունը եւ հրատարակությունը: Մասնագետների համար բացառիկ անակնկալ էր հիշյալ հայերեն վարքերի գոյությունը, որոնք, ի դեպ, XIV-XVII դարերի ընդօրինակություններ լինելով հանդերձ, առավել հին են, քան դրանց մինչ օրս հայտնի հունարեն եւ ռուսերեն տարբերակներից շատերը:

Զրուցեց

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ



Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը Գերագույն խորհրդում

Առաջիկա օգոստոսի 23-ին՝ Հայաստանի անկախության հռչակագրի 20-ամյակի օրը, տեղի է ունենալու ՀՀ խորհրդարանականների համաժողովը՝ ՀՀ Գերագույն խորհրդի մի խումբ ակտիվ անդամների նախաձեռնությամբ: Այդ առթիվ հետաքրքրական պիտի լիներ, թռուցիկ կերպով վերհիշել Ռամկավար Ազատական կուսակցության մասնակցությունը ՀՀ Գերագույն խորհրդի աշխատանքներին՝ իր մեծությամբ 2-րդ խմբակցության միջոցով:

Հայաստանի անկախացումը թելադրում էր նաեւ ավանդական կուսակցությունների վերադարձը մայր հայրենիք:

Ազգային արժանապատվությունը վերագտնելու, ազատ ու անկախ ապրելու հույսն ու հավատն էր տիրում նորանկախ Հայաստանում:

Արժեհամակարգի փոփոխման, յուրահանչյուր հայի մեջ ազգային ոգու արթնացման, իր իրական արմատներին վերադառնալու անգնահատելի մթնոլորտ էր ստեղծվել:

Միակուսակցականության անկումը, հավատի, խոսքի, գաղափարի ազատ ընտրությունը դարձել էին իրականություն:

Հարուստ ազգային ու ժողովրդական արժեքներ կրող ՌԱԿ-ը չէր կարող իր բազմահազար համակիրները չունենալ արդեն նորանկախ հայրենիքում: ՀՀ-ում ՀՌԱԿ-ի հիմնադիր անդամներից երկուսը Գերագույն խորհրդում էին՝ Վարդան Պետրոսյան եւ Պետրոս Քացախյան: Այդ մասին ԳԽ ամբիոնից հայտարարելուց հետո ռամկավար ազգային գաղափարախոսությանը դավանող, թեկուզեւ նախորդ համակարգում նախկին պատգամավորներ, ցանկություն հայտնեցին անդամագրվելու ՀՌԱԿ-ին՝ ձեւավորելով խորհրդարանական խմբակցություններից մեկը: Այդ էր պահանջում ժողովրդավարական պառլամենտարիզմը՝ ԳԽ-ն դարձնել գաղափարների բախման եւ ՀՀ նոր օրենսդրության ստեղծման ամբիոն: 1993 թ. ՀՌԱԿ խմբակցությունում ընդգրկված էին արդեն 21 պատգամավորներ՝ իրենց փորձով, ինտելեկտով եւ պառլամենտին տոն տվող աշխույժ գործունեությամբ աչքի ընկնող անհատներ:

Ազդեցիկության չափանիշներից մեկն այն դարձավ, որ խմբակցության անդամ Վարազդատ Ավոյանը, ի հեճուկս ՀՀՇ-ի լուրջ դիմադրությանը, ընտրվեց ՀՀ ԳԽ փարտուղար: ԳԽ ամբիոնից ազատական նոր գաղափարախոսության թարմությամբ էին հնչում Վարդգես Պետրոսյանի, Մելս Սահակյանի, Վիգեն Խաչատրյանի, Արամ Բաբաջանյանի, Վարդան Պետրոսյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Պետրոս Քացախյանի, Սամվել Տոնոյանի եւ մյուսների ելույթներն ու հայտարարությունները: Սթափեցնող ազդեցություն ունեին ՀՌԱԿ խմբակցության օրենսդրության վերաբերյալ հնչող եզրակացությունները, հասարակական-քաղաքական կյանքին, սոցիալական խնդիրներին վերաբերող հայտարարությունները:

ՀՌԱԿ-ն օրենսդրական բազմաթիվ նախաձեռնությունների հեղինակ էր, որոնք հիմնականում վերաբերում էին ազատ շուկայական տնտեսության հիմքերը կանոնակարգող օրենքների ու օրենսդրական ակտերի ընդունմանը:

Բավական արդյունավետ էր «ՀՌԱԿ խմբակցություն-հանրապետական վարչություն» փոխհամագործակցությունը: Համատեղ քննարկումները, ՀՌԱԿ կուսակցության շարքայինների կարծիքն օրենսդիր մարմնի ամբիոնից հնչեցնելը դարձել էր անհրաժեշտ աշխատանք: Քիչ չէին նաեւ անհամաձայնությունները, թեժ բանավեճերը 2 կառույցների միջեւ: Դրանք հիմնականում վերաբերում էին միջկուսակցական հարաբերություններին, այլ կուսակցությունների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, կուսակցության շարքերի ու կառուցվածքի ամրապնդման խնդիրներին: Իսկ ամենագլխավոր թեման ԳԽ-ի վերջին տարում դարձել էր իշխող կուսակցության սխալներին ու վարքագծին անկողմնակալ գնահատական հնչեցնելու, հասարակական-քաղաքական կյանքում նկատվող հիասթափության ու դժգոհությունների օրեցօր ավելացող տրամադրությունների արտահայտողը դառնալու անհրաժեշտությունը:

ՀՌԱԿ-ը դարձավ նաեւ Միջազգային լիբերալի դիտորդ անդամ:

Խմբակցության անդամները մասն էին կազմում այլ երկրների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացին, պառլամենտական խմբերի կազմում փոխայցելություններին, իշխանության տարբեր մակարդակներում ամենատարբեր խնդիրների քննարկումներին...

Առանձնապես հիշարժան է ՀՌԱԿ-ի ներկայացուցչի մասնակցությունը ՀՀ առաջին նախագահի առաջին այցելությանը Սիրիա: Ռամկավարների ոգեւորությունն անսահման էր Անկախ Հայաստանի նախագահի գլխավորությամբ բազմակուսակցական պատվիրակության ժամանման առիթով:

ՀՌԱԿ-ը ԳԽ-ում եւ հանրապետությունում անընդհատ աճող հեղինակությամբ եւ ազդեցիկությամբ լուրջ քաղաքական ուժ էր դարձել: Երկրի քաղաքական կյանքում նա կարող էր լուրջ գործոն դառնալ եւ մաս կազմել հետագա ազգային ժողովներում եւ իշխանության այլ թեւերում, եթե կարողանար հաղթահարել ներկուսակցական տարաձայնությունները, որոնք առաջանում էին նաեւ ոչ առանց ՀՀՇ-ի միջամտությունների ու քայքայիչ գործունեության, որի զոհը դարձավ նաեւ հենց ինքը՝ ՀՀՇ կուսակցությունը՝ դրանով լուրջ հարված հասցնելով այն շարժմանը, որը համախմբել էր համայն հայությանն իր նորանկախ հայրենիքի ու պետության շուրջը:

ԳԽ-ից հետո առաջին գումարման ԱԺ-ում ընտրվեց ՀՌԱԿ միայն 1 անդամ, որը չէր ներկայացնում կուսակցությանը:

ՎԱՐԱԶԴԱՏ ԱՎՈՅԱՆ

AZG NEW PDF.qxd 16/08/2010 20:05 Page 1

Սարաֆյանը՝ Էլեֆդաղին. «Եկեք դեմ առ դեմ հանդիպենք»

«Ազգը» բազմիցս գրել է, որ թուրք խորհրդականները Անգլիայում հրատարակված հայտնի «Կարույց գիրքը»՝ հայերի ցեղասպանության մասին, որակում են «պատերազմական ժամանակաշրջանի կեղծիք»: Հարցը միասին քննարկելու անգլիական խորհրդարանականների կոչերին նրանք չեն պատասխանել: Ստորև թարգմանաբար ներկայացվող հարցազրույցում Անգլիայում գործող «Կոմիտաս ինստիտուտ»-ի տնօրեն Արա Սարաֆյանը, որպես թուրքական ժխտողական պնդումների գլխավոր դրդիչ, մասնանշում է Շուքրու Էլեֆդաղին, որը նախկինում եղել է Մ. Նահանգներում Թուրքիայի դեսպանը եւ ներկայումս ԹԱՄԱ-ի՝ Թուրքիայի ազգային մեծ ժողովի (Մեջլիսի) անդամ է: Հարցազրույցը «Ակօսի» ներկայացուցիչն է անցկացրել, եւ թերթի թուրքական տարբերակում տպագրվել է այս տարվա հուլիսի 9-ի համարում:

«Ակօս» - Արդեն մի տարի է, ինչ «Կարույց գիրքը» թարգմանված է նաեւ թուրքերեն: Ի՞նչ զարգացումներ են արձանագրվել մինչեւ օրս:

Սարաֆյան - Մենք «Կարույց գիրքը» (Մավի ֆիթաղ) թուրքերենով հրատարակեցինք, որպեսզի ԹԱՄԱ-ի ներկայացուցիչներին կարողանանք ընդգրկել այդ հարցի քննարկումներում: Մեջլիսի գրեթե բոլոր անդամները ստորագրել էին մի նամակ, որտեղ նշված էր, թե հայերի ցեղասպանությունը հաստատող փաստեր չկան, եւ թե բրիտանացիները հորինել են «Հայկական հարցը» քարոզչական նպատակներից ելնելով: Այդ նամակը նրանք բրիտանական խորհրդարան էին ուղարկել 2005-ին: Նրանց այդ քայլին մղող գլխավոր անձնավորությունը Շուքրու Էլեֆդաղն էր, որը «Կարույց գրքի» մասին ապատեղեկատվության սկզբնավորողն է: Նա շատ ազդեցիկ է Թուրքիայում, եւ նրա տեսակետները պաշտպանվում են խստագույն օրենքներով, որոնց գալիս են լրացնելու գրաքննությունն ու ահաբեկելը: Նրանց պնդումների առիթով մի խումբ բրիտանացի խորհրդականներ եւ «Կոմիտաս ինստիտուտ»-ը հրավիրեցին հարցը քննարկելու միասին՝ դեմ առ դեմ, սակայն նամակը ստորագրողներից ոչ մեկը, ոչ իսկ Շուքրու Էլեֆդաղը, չպատասխանեց մեր առաջարկին:

- Իսկ ինչի՞ց են նրանք վախենում: Ինչո՞ւ չեն ցանկանում մասնակցել քննարկումներին:

- Կարծում եմ՝ նամակը ստորագրողների մեծամասնությունը չի գիտակցել, թե ինչքան անհիմն է իրենց դիրքորոշումը: Նրանք պարզապես հավատացել են Էլեֆդաղին: Ուրիշներ էլ ապատեղեկացվել են այլ ազգայնականների կողմից, ինչպիսիք են օրինակ՝ Միմ Քեմալ Օքեն եւ Շինասի Օրելը, ովքեր «Կարույց գրքի» մասին անհեթեթություններ են գրել:

- Իսկ ի՞նչ միջոցներով մոտեցաք նրանց:

- Լորդ Էյվբերին մոտեցավ նրանց Մեջլիսի նախագահ Բյուլենթ Արնչի միջոցով: Արձագանք չստացավ: Այնուհետեւ նա առանձին անդամների հետ կապ հաստատեց էլփոստի միջոցով: Դարձյալ պատասխան չստացավ: Երբ գիրքը թուրքերենով հրատարակվեց Անկարայում, մենք, թույլտվություն ստանալով Մեջլիսից, առանձին անհատներին ուղարկեցինք գրքի օրինակներ: Բայց Էլեֆդաղը դադարեցրեց առաքումները, եւ գրքերը վերադարձվեցին առաքող ընկերությանը:

- Ինչքանո՞վ է անկողմնակալ «Կարույց գրքի» Ձեր դիրքորոշումը:

- Տարիներ շարունակ աշխատել եմ այդ գրքի վրա եւ հրատարակել իմ գրախոսականը: Երբ թուրք խորհրդարանականների՝ Լոնդոն ուղարկած նամակի առթիվ իմ դիրքորոշումը շարադրեցի, այդ գրությունը նույնպես հրապարակվեց: Այնպես որ, իմ կողմից ես արել եմ այն ամենը, ինչ հնարավոր է այդ հարցի շուրջ քննարկումներ ծավալելու: Ավելին չեմ կարող անել: Կարող են մարդիկ այս կամ այն կետի շուրջը չհամաձայնել ինձ հետ, բայց ես մաքուր խղճով եմ կատարել իմ գործը եւ ամենակարեւորը՝ չեմ կեղծել տեղեկությունները: Ինչը, ցավոք, չեմ կարող ասել Շուքրու Էլեֆդաղի եւ մյուսների դիրքորոշման մասին:

- Ինչո՞ւ եք այդքան հետաքրքրված առաջ տանելու այդ հարցը:

- «Կարույց գրքի» պարագան անսովոր ուսումնասիրության նյութ կարելի է համարել այն առումով, որ խնդիրը վերաբերում է բրիտանական արխիվներին, որոնց թուրքական իշխանությունները չեն կարողանում հասնել եւ իրենց ցանկությամբ մեթենայություններ կատարել, ինչպես թուրքական արխիվներում: «Կարույց գրքը» կարելի է վիճարկել միայն ինտելեկտուալ հողի վրա: Ինչ որ գրված է այնտեղ, կարելի է ստուգել եւ հանգել որոշակի եզրակացության: Երկրորդ, գրքի ժխտումը թուրքերի կողմից կատարվում է ամենաբարձր քաղաքական մարմնի մակարդակով, որն իբր պատրաստ է արխիվներ բացել եւ երկխոսություն ծավալել Հայկական հարցի շուրջը: Բայց իրականում այդ նույն քաղաքական կառույցը «խաղեր է խաղում» «Կարույց գրքի» հետ, ապացուցելով, որ թուրքերը լուրջ չեն իրենց մտադրություններում:

- Ինչն է ստիպում Ձեզ ասել, որ նրանք չեն ցանկանում վերանայել իրենց դիրքորոշումը հայերի ցեղասպանության վերաբերյալ:

- Մինչ որոշ անհատներ եւ մի քանի հաստատություններ պատրաստ են իրենց երկրի անցյալի պատմությունն ընդունել այնպիսին, ինչպիսին որ կա, Թուրքիայում գերակշռող մեծամասնությունը դեռեւս պատրաստ չէ քննարկումների: Ընդհանուր մթնոլորտն այն է, որ մարդիկ դեմ են նման քննարկումներին: Տարիներ շարունակ հակահայկական քարոզչություն ծավալած պետական հաստատությունները դեռեւս գործում են անխափան, եւ ամեն անգամ Թուրքիա այցելելիս զարմանում եմ՝ տեսնելով, թե որքան նոր հակահայկական գրքեր են հրատարակվել:

- Դուք խոսեցիք թուրքական արխիվների մասին. պնդո՞ւմ եք, որ դրանք բաց չեն այժմ:

- Դրանք ավելի բաց են այժմ, քան առաջ, եւ որոշ հետաքրքրական արդյունքներ տվել են: Բայց արխիվի իշխանություններն իրենք են խիստ «պարտիզանական նվիրվածություն» ցուցաբերում իրենց ժխտողական դիրքորոշմանը: Արտոնված նյութերը կարծես հատուկ ընտրված լինեն, եւ դրանց մատչելիությունը սահմանափակված է: Օրինակ՝ Բաբբականլիկի արխիվները Ստամբուլում կամ զինվորական արխիվները Անկարայում, բազմաթիվ գրքեր են հրատարակել, որոնք ժխտում են հայերի ցեղասպանությունը: Նման հաստատությունների իշխանությունները, իմ կարծիքով, չպետք է կողմնապահությամբ զբաղվեն: Փաստը, որ Թուրքիայում իրավիճակը այդպես չէ, կասկածելի է դարձնում այդ հիմնարկների իսկական բնույթը: Ինչպե՞ս է, որ թուրք լրագրող եւ պատմաբան Մուրատ Բադեմսկին Թալեաթ փաշայի անձնական արխիվներից դուրս է բերում բնակչության քանակի վերաբերյալ փաստաթղթեր, որոնցում նշված է, որ մեկ միլիոն հայեր «բացակայում են» 1917 թ. Օսմանյան կայսրությունում, մինչդեռ արխիվների աշխատողները շարունակում են պնդել, որ հայերին «վերաբնակեցրել» են 1915-16 թվերին՝ առանց, սակայն, մանրամասնություններ նշելու, թե ի վերջո նրանք որտեղ հանգրվանեցին: Ինչո՞ւ են վերաբնակեցման տվյալները արգելված, ոչ հասանելի: Ինչ վերաբերում է հասանելիությանը կամ մատչելիությանը, ապա եթե որեւէ մեկը որոշի, ասենք, վարչապետարանի արխիվների նյութերից օգտվել, ապա պետք է իմանա, որ մեկ օրվա ընթացքում կարող է օգտվել միայն սահմանափակ քանակի նյութերից: Իմ պարագայում, օրինակ, եթե ցանկանում եմ 1915 թվին վերաբերող ծածկագրային հեռագրերի ուսումնասիրությամբ զբաղվել (դրանցից հազարավորները կան), ապա կարող եմ օրական ընդամենը 25 հեռագրից օգտվել, որովհետեւ յուրաքանչյուրը որպես առանձին փաստաթուղթ է դասակարգված: Հաշվի առնելով, որ այդ հեռագրերը ընդամենը մի քանի տող են պարունակում, դրանք պետք է դասակարգված լինեին մեկ ընդհանուր փաթեթում, որպեսզի հնարավոր լիներ արդյունավետ աշխատել դրանց վրա: Նաեւ չի թույլատրվում պատվիրել եւ ստանալ անորոշ քանակի պատճենահանված օրինակներ, ինչպես, ասենք, կատարվում է բրիտանական կամ ամերիկյան արխիվներում: Այնպես որ, դեռեւս «օրինական» որոշ սահմանափակումներ կան նյութերի մատչելիության առումով: Հուսով եմ, այդ սահմանափակումները չեն տարածվում այլախոհ հեղինակների վրա:

- Նման սահմանափակումներ չկա՞ն այլ երկրների արխիվներում:

- Որքան ես եմ տեղեկացված՝ ոչ: Վստահաբար՝ ոչ ԱՄՆ-ում եւ Մեծ Բրիտանիայում, որտեղ ուսումնասիրողը կարող է մեկ օրվա ընթացքում իր ձեռքի տակ ունենալ «Կարույց գրքի» վերաբերյալ թոյնբիի ամբողջ գործերը, անձամբ պատճենահանել կամ պատվիրել եւ ստանալ, որոշակի գումարի վճարման դեպքում, գործերի ամբողջական պատճենահանումները: Երբ 1980-ական եւ 1990-ական թվերին Թուրգուտ Օզալն ու Մեսութ Յըլմազը քննարկում էին Հայկական հարցի վերաբերյալ թուրքական արխիվների բացման խնդիրը, նրանք նույնիսկ խոստացան, որ նյութերի պատճենահանված օրինակներ կտրամադրվեն նաեւ Թուրքիայից դուրս, այլ երկրներում աշխատող գիտաշխատողներին: Դա չի գործում:

- Ի՞նչ լուծում եք առաջարկում «Կարույց գրքի» հարցում:

- Լորդ Էյվբերին եւ ես առաջարկում ենք դեմ առ դեմ հանդիպել ԹԱՄԱ-ի խորհրդարանականների, հատկապես Շուքրու Էլեֆդաղի հետ, որը պարտավոր է բացատրություն տալ իր իսկ ստեղծած քաոսային վիճակի կապակցությամբ: Նրան Լոնդոն էինք հրավիրել մի քանի ամիս առաջ, բայց նա հրաժարվեց նույնիսկ պատասխանել մեր հրավերին: Նրա դիրքորոշումը կտրականապես ժխտողականին է վայել եւ ոչ թե որեւէ հարցում տարակարծություններ ունեցողին:

- Կհամաձայնեի՞ք Լոնդոնի փոխարեն Թուրքիայում կազմակերպել այդ հանդիպումը:

- Այո՛, կողջունեի նման հանդիպումը այնքան ժամանակ, որ դա թափանցիկ եւ արդար լինի:

Թարգմ. Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Թեժ կետեր

Ջրհեղեղից 20 մլն աղետյալ Պակիստանում

ՄԱԿ-ը ստեղծում է օգնության հիմնադրամ

Հեղեղումների հետեւանքով վերջին օրերին կացարանից զրկված պակիստանցիների թիվը հասել է 20 միլիոնի: Այդ մասին ժողովրդին ուղղված դիմումի մեջ հայտարարել է վարչապետ Ռզա Յուսուֆ Գիլանին:

Գիլանիի խոսքերով, տարերքի ոչնչացրած ցանքատարածությունները գնահատվում են մի քանի միլիարդ դոլար: Ավերված են ճանապարհներ, կամրջի եւ էլեկտրահաղորդման գծեր:

RFI ռադիոկայանի տվյալներով, 6 մլն աղետյալներ առհասարակ որեւէ օգնություն չեն ստացել, քանի որ անձրեւներից հորդացած գետերը հաղորդակցության հնարավորություն չեն թողել:

ՄԱԿ-ի տվյալներով, ջրհեղեղից զոհվածների թիվը հասնում է 1600-ի: Բացի դրանից, ՄԱԿ-ը պատշաճաթես հաստատել է հեղեղված Սվատի օկրուգում խոլերայով հիվանդանալու առնվազն մեկ դեպք:

Մշակաբույսերի պատշաղանության ընկերակցությունը նշում է, որ Պակիստանում ջրածածկ են ավելի քան 68 հազար քառակուսի կիլոմետր ցանքեր: Միայն բամբակենու կրած կորուստները կազմում են մոտ 1,8 մլրդ դոլար:

Հուլիսի վերջին սկսված եւ մինչեւ օրս շարունակվող հեղեղումները երկրում ամենաուժեղ տարերային աղետն են 1929-ից ի վեր:

ՄԱԿ-ը հատուկ հիմնադրամ է ստեղծում Պակիստանին օգնելու նպատակով: Կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունը կիրակի օրը Պակիստան է այցելել այդ երկրի «ժողովրդին եւ կառավարությանը ՄԱԿ-ի համերաշխությունը հայտնելու» նպատակով: «Պարիզիեն» թերթը մեջբերում է Իսլամաբադում Բան Կի Մունի արած հայտարարությունը. «Ես այստեղ եմ նաեւ, որպեսզի միջազգային ընկերակցությանը թախանձագին խնդրեմ արագացնելու օգնությունը Պակիստանին»: Թերթի տվյալներով, ՄԱԿ-ը ստեղծում է միջազգային օգնության հիմնադրամ, որտեղ պետք է 459 մլն դոլար հանգանակվի Պակիստանում շտապ օգնության գործողությունների համար: Առայժմ հաջողվել է հանգանակել այդ գումարի 1/4-ը:

ԿԺԴՀ-ն կրկին սպառնում է

Հարավային Կորեան եւ ԱՄՆ-ը օգոստոսի 16-26-ը Կորեական թերակղզու հարավում անցկացնում են իրենց ամենամյա զորավարժությունների հերթական փուլը: Հարավկորեական լրատվամիջոցները նշում են, որ զորավարժությունների նպատակն է ամրապնդել երկրի անվտանգությունը եւ դաշնակիցների զինված ուժերի պատշաճունակությունը:

Զորավարժություններին մասնակցում են 56 հազար հարավկորեացի եւ 30 հազար ամերիկացի զինծառայողներ: Ամերիկյան զորքերի մի մասը գործում է ԱՄՆ տարածքում գտնվող ռազմական համակարգչային ցանցերի միջոցով:

Մարտի 26-ին հյուսիսկորեական սուզանավից արձակված տորպեդից հարավկորեական «Չոնան» պահականավի խորտակումը երկկողմ հարաբերություններում հավելյալ լարվածություն ստեղծեց, իսկ ներկայիս զորավարժությունները մի նոր առիթ են ԿԺԴՀ-ի սպառնալիքների համար: Պաշտոնական Փենյանը ժխտում է իր մեղքը «Չոնանի» խորտակման մեջ եւ խոսում է դաշնակիցների «սադրանքի» մասին, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

ԿԺԴՀ-ն ԱՄՆ-ի եւ Հարավային Կորեայի ներկայիս զորավարժությունները համարում է լայնածավալ ռազմական ագրեսիայի նախապատրաստմանն ուղղված գործողություններ եւ սպառնում է «պատասխանել ամենալուրջ եւ չտեսնված հատուցմամբ»:

Աֆղանստանում կոալիցիոն ուժերի կորուստները՝ 2002 սպանված

Աֆղանստանում միջազգային կոալիցիոն ուժերի կորուստներն անցել են 2000-ից: 2001 թ. հոկտեմբերից մինչեւ օրս այնտեղ սպանված զինծառայողների թիվը հասել է 2002-ի, հաղորդում է iCasualties.org անկախ կայքը: Սպանվածներից 1226-ը ամերիկացիներ են, 331-ը՝ բրիտանացիներ, 445-ը՝ այլ պետությունների ներկայացուցիչներ:

Կոալիցիոն ուժերը ամենամեծ կորուստները կրել են 2009-ին (521 սպանված): 2010-ի յոթուկես ամսում սպանվել է 434 զինծառայող: Ներկայումս ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ի երկրները Աֆղանստանում ունեն 140 հազար զինվոր:

Ինչ վերաբերում է խաղաղ բնակչության զոհերին, 2010-ի առաջին կիսամյակում զոհվել է 1271 մարդ, որը 31 տոկոսով ավելի է 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Այս տվյալները մեջբերող ՄԱԿ-ի զեկույցը նաեւ նշում է, որ խաղաղ բնակիչների 76 տոկոսը զոհվել է թալիբների եւ այլ ահաբեկիչների մեղքով, մնացյալը՝ ՆԱՏՕ-ի զինծառայողների սխալների հետեւանքով:

ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի վարչակազմը ծրագրում է Աֆղանստանից զորքերի զանգվածային դուրսբերումը սկսել 2011-ի հուլիսին: Կոալիցիոն զորքերի լիազորությունները աֆղանական բանակին ու ոստիկանությանը պետք է փոխանցվեն մինչեւ 2014-ի վերջը:

Զորքերի դուրսբերման հակառակորդները Օբամայի ծրագիրը համարում են սխալ: Նրանց կարծիքով, կոալիցիոն ուժերի դուրսբերումից հետո «Թալիբան» շարժման գրոհայիններն Աֆղանստանում կարող են վերսկսել ահաբեկչական գործունեությունը:

AZG NEW PDF.qxd 16/08/2010 20:30 Page 1

Լեոնիդ Ենգիբարյանի թոռը մասնակցեց իր պապի անվան փառատոնին

Ամենաուրախ եւ ամենաէխուր, մնջախաղի ու կրկեսի բեմարվեստի խոշոր վարպետ Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 75-ամյակին նվիրված «Մնջախաղի միջազգային փառատոնը», որը կայացավ օգոստոսի 10-15-ը Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում, ազդարարեց փառատոնի փակումը քաղաքի հրապարակում, որին մասնակցում էին շուրջ 10 երկրներից ժամանած մնջախաղի վարպետներ: Փառատոնի գործադիր տնօրեն Ժիրայր Դաղասյանը երկու տարի առաջ նախաձեռնեց «Մնջախաղի միջազգային փառատոնը» եւ այն միջազգային ճանաչում

ձեռք բերեց շատ կարճ ժամանակում: Վկան, ԱՄՆ-ից, Չեխիայից, Բուլղարիայից եւ այլ երկրներից ժամանած հյուրերն էին:

Ցավոք, փառատոնը տոն եղավ միայն Ծաղկաձորում հանգստացողների ու երեխաների համար, մինչդեռ շատ թատերասերներ հաճույքով կդիտեին ներկայացումները, եթե այն Երեւանում կայանար: Փառատոնի հանդիսավոր բացմանը ներկա էին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, ում հովանու ներքո 2-րդ անգամ է անցկացվում փառատոնը եւ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Մշակույթի նախարարության աջակցությամբ, այս տարվա փառատոնին առաջին անգամ Հայաստան էր ժամանել Լեոնիդ Ենգիբարյանի թոռը՝ Պետր Պոպպերը (Չեխիա): Վերջինիս ելույթը կազմված էր ճիշտ իր պապի կրկեսային ու մնջախաղային համարներից: Ով գեթ մեկ անգամ տեսել էր Լ. Ենգիբարյանին, չէր կարող չբացականչել. «Այսքան նմանություն, այսպիսի ոլորտիկա ու ճկունություն»: Այո, Պետրը այդ ամենին սկսել էր տիրապետել, երբ 14 տարեկանում իր մորից՝ Բարբարա Հալամկովայից սանում է մի ճամպրուկ՝ Ենգիբարյանի իրերով ու թղթերով լեցուն եւ այդ օրվանից սկսում է հետաքրքրվել իր պապի արվեստով: Պետր Պոպպերը այնուհետեւ դիմում է չեխ ծաղրածուներ Հիբներին, Տուրբային, Կաֆտանին, որպեսզի իրեն օգնեն:

«**Ազգի**» հարցերին պատասխանելով, Պետրը ասաց. «Ես պապիկիս մասին լսել եմ նրանցից, ովքեր ճանաչել են նրան: Նրանց պատմությունները ինձ շատ մեծ էներգիա հաղորդեցին եւ օգնեցին ճանաչել ոչ միայն պապիս, այլեւս ինքս ինձ: Երբ պապիս գործերը կարդացի փոքր ժամանակ, ոչինչ չհասկացա: Երբ սկսեցի նրա արվեստով լրջորեն հետաքրքրվել եւ ֆիլմերը նայեցի, նկատեցի, որ այդ գործերից մի քանիսը կարծես իմ կյանքից վերցրած լինեին: Չնայած, որ գեղարվեստական կերամիկայի բաժնում եմ սովորել, սակայն պապիս մասին տեղեկանալով՝ հաստատ որոշեցի կրկեսում սովորել: Թեեւ երբեք չեմ լինի այնպիսին, ինչպիսին Ենգիբարյանն է եղել, եւ դա կարեւոր չէ, սակայն պետք է նրա պատգամը կատարեմ ու շարունակեմ իմ վրա աշխատել: Պետք չէ նույնը անել, ինչ նա է արել, այլ իմ ճանապարհը անցնել, թեկուզ ավելի դժվար, բայց ոչ թե նույնը, այլ մի այլ՝ հետաքրքրական եւ ինքնատիպ: Եվ դրանում շատ մեծ դեր ունեք նաեւ դուք, լրագրողներդ ու նաեւ իմ շատ սիրելի հանդիսատեսը: Օգնեք ինձ եւ ես ձեզ ուրախ պահեր կպարգեւեմ, այնպիսին, ինչպիսին պարգեւել է իմ պապը՝ Լեոնիդ Ենգիբարյանը»:

Մնջախաղի միջազգային փառատոնը այս տարի այնքան էլ լավ չէր կազմակերպված, թերություններ կային: Սակայն հույս ունենք, որ դրանք կշտկվեն ու կիարթվեն հետագայում: Ինչեւէ, փառատոնի փակման արարողությանը բոլոր մասնակիցներին տրվեցին հավաստագրեր: Իսկ Կենտրոնական բանկի կողմից թողարկված Լեոնիդ Ենգիբարյանի 75-ամյակին նվիրված արծաթյա հուշադրամը, ԿԲ-ի ներկայացուցիչ **Զարուհի Բարսեղյանը** հանձնեց Ենգիբարյանի թոռանը՝ **Պետր Պոպպերին**: Վերջինս համբուրեց այն ու ասաց, որ դա կլինի իր կյանքի թալիսմանը, որից երբեք չի բաժանվի:

Մ. Մ.

ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Սերժ Թանգյանը համաձայնել է օժանդակել Գյումրիին

Ամերիկահայ ռոք-երաժիշտ, System of a Down խմբի մենակատար Սերժ Թանգյանը մասնակցելու է Գյումրիի թիվ 6 երաժշտական դպրոցի վերակառուցման ծրագրին: Դպրոցի վերակառուցման ծրագիրն իրականացնում են Մեդիամախ լրատվական գործակալությունը, ավստրալական Do Something կազմակերպությունը եւ Հայ օգնության ֆոնդը: Ծրագրի իրականացման

գործում մեծ մասնակցություն ունեն «Դիփ Փարփլ» ռոք խմբի վոկալիստ Իէն Գիլանը եւ «Բլեք Սաբաթ»-ի կիթառահար Թոնի Այոմին :

«Կարծում եմ՝ Գյումրիին օժանդակելու ծրագիրը, որի վրա աշխատում են Թոնի Այոմին եւ Իէն Գիլանը, հոյակապ գաղափար է», Մեդիամախ-ին ասել է Սերժ Թանգյանը: Գյումրիին օժանդակելու նպատակով Թոնի Այոմիի եւ Իէն Գիլանի մենեջերները կապվել են Սերժ Թանգյանի գրասենյակի հետ: «Հիմա փորձում ենք գտնել միասին աշխատելու լավագույն եղանակն ու ժամանակահատվածը», նշել է Ս. Թանգյանը:

Դպրոցի շինարարության համար հարկավոր է 250 հազար դոլար: 72 հազար դոլարն արդեն հավաքվել է, որից 27 հազարը տրամադրել է Հայաստանի կառավարությունը, իսկ 45 հազարը ստացվել է Իէն Գիլանի երեւանյան համերգներից:

Ի. Պ.

ԺԱՖ-ի «Արաֆ-Սասուն» համույթի Ararat Mon Amour ներկայացումը մայր հայրենիքում

ՀՀ սփյուռքի նախարարության «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական 4-րդ փառատոնի «Կատարողական արվեստի օրեր» ծրագիրը եզրափակվեց Մարսելի «Ֆրանսահայ երիտասարդաց միության» (ԺԱՖ) «Արաֆ-Սասուն» համույթի յուրօրինակ Ararat Mon Amour համերգային ներկայացմամբ (բեմադրությունը՝ Ֆելիքս եւ Թերեզա Գրիգորյանների): Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում եւ նաեւ Գյումրիի Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում համույթի ելույթները ընդունվեցին ջերմությամբ, հոսնկայս երկարատեւ ծափերով ու բռավոներով:

«Արաֆ-Սասուն» համույթը այս տարի նշում է հիմնադրման 50-ամյակը: Բաղկացած է 40 պարողպարուհիներից եւ 25 երաժիշտներից, որոնց շուրջը, ահա արդեն կես դար շարունակ, համախմբվում են պարի ու երաժշտության նվիրյալները ու հիմնում երիտասարդ տաղանդների իսկական դարբնոցներ, որտեղ կոփվում են համույթի ապագա անդամները: «Ազգի» հետ զրույցի ընթացքում հայ պարի լեգենդ, բազմաթիվ տիտղոսների արժանացած Վանուշ Խանամիրյանը նշեց. «50 տարի առաջ հրավիրվեցի Փարիզ եւ «Ժաֆի» հետ Մարսել քաղաքում Պասկալ Շամասյանի հետ հիմնադրեցինք «Սիս-Մասիս» պարային խումբը: Սկզբում խումբը բաղկացած էր 8 տղաներից, որոնք ոգեւորված էին ու սիրով սովորում էին ամեն մի շարժում, ինչը ես նրանց ուսուցանում էի...»:

Եվ ահա այդ օրվանից առ այսօր օրն Խանամիրյանը ամեն տարի մի քանի ամսով հրավիրվում է Ֆրանսիա ու նոր պարային բեմադրություններ ստեղծում արդեն «Արաֆ-Սասուն» վերանվանված համույթի համար: «Արաֆ» պարախմբի ղեկավարն է Պասկալ Շամասյանը, որն իր տիկնոջ՝ Մարիոն Շամասյանի հետ հայկական պարն են ուսուցանում համույթի 4-րդ սերնդին «Սասուն» երաժշտական խմբի հետ, որի ղեկավարն է Միքայել Վեմյանը (դուդուկ, զուռնա, ծվի):

«Արաֆ-Սասուն» համույթը պարբերաբար նշել է նաեւ լեգենդար պարուսույց Վանուշ Խանամիրյանի հոբելյանները, նրան նվիրելով հատուկ բեմականացված ծրագիր, որով իր երախտագիտությունն է հայտնել մեծ ուսուցչին, որի մի քանի տասնյակ բեմադրած պարերը մաս են կազմում համերգացանկի մշտական ծրագրին, որտեղ իրենց արժանի տեղն են զբաղեցնում նաեւ հայտնի ու ճանաչված վարպետ-պարուսույցներ՝ Ազատ Ղարիբյանի, Պասկալ եւ Մարիոն Շամասյանների, Նելլի Կարապետյանի, Փայլակ Սարգսյանի եւ ուրիշների բեմադրությունները:

«Ամեն անգամ մեծ բավականություն եմ ստանում՝ դիտելով «Արաֆ-Սասուն» խմբի ծրագիրը», նշեց Խանամիրյանը, նրանց կատարողական արվեստն այնքան բարձր է, որ գերազանցում է Հայաստանում գործող շատ պարախմբերի մակարդակը: Եվ ահա այս փառատոնը շատ լավ առիթ է, որ շատերը գան, տեսնեն ու օրինակ վերցնեն, թե ինչպես է պետք ներկայացնել հայ պարը, պարային տարազները ու նաեւ բեմականացման մատուցման ձեւը: Ես չեմ կարող իմ գոհունակությունը չարտահայտել ու նրանց եմ հղում իմ բրավոները. ապրեք, որ դուք մեր պատիվն ու մեր ազգային մշակույթը անաղարտ եք պահում ու փոխանցում սերունդներին: Ձեր ցավը տանեմ, ես մինչեւ կյանքիս վերջը պատրաստ եմ օգնել ձեզ, ի՛մ զավակներ»:

Vanouch, légende d' Arménie ներկայացման մեծ հաջողությունից հետո «Արաֆ-Սասուն» համույթը իր հաջորդ՝ «Արարատ իմ սեր» ստեղծագործության թեմա ընտրեց կյանքի հաղթանակը: Հայերի պատմությունը դարերից ի վեր փոխանցվել է մշակույթի միջոցով: Ա. Խաչատրյանի երաժշտությունից մինչեւ Արշիլ Գորկու կերպարվեստը մշակույթն է, որ իր մեջ կրել է ժողովրդի ցավը, նրա ուժն ու ապրելու կամքը: Ֆրանսահայ երիտասարդաց միությունը (ԺԱՖ, նախագահ Ժյուլիեն Տիգրան Հարությունյան) մշտապես փորձում է փոխանցել այդ ժառանգությունը պարի եւ երաժշտության միջոցով ի դեմս «Արաֆ» պարախմբի եւ «Սասուն» նվագախմբի:

Եվ ահա հայաստանցի հանդիսատեսը հնարավորություն ունեցավ ըմբոշխնելու Ararat Mon Amour նոր ներկայացումը, որի մեջ միահյուսվում են ժամանակակիցն ու ավանդականը: Առաջին անգամ հայ հանդիսատեսի դատին ներկայացվեց նորարարական միզանսցեն եւ անսպասելի պարային ու երաժշտական լուծումներով մի համերգ-բեմադրություն՝ շարունակական սյուժետային հաջորդականությամբ, առանց ընդմիջումների՝ ներկայացնելով հայ ժողովրդի կյանքի դժվար ու երջանիկ պահերը: Մարսելցի Արամ եւ երեւանցի Մանուկ եղբայրների հանդիպման միջոցով Ararat Mon Amour-ը վերապատմում է հայերի պատմությունը հատկապես 1915 թ. Ցեղասպանությունից հետո:

Վարագույրը բացվեց եւ բեմում պատկերվեց «Զվարթնոց» օդանավակայանը: Ամառ, 2008 թվական: Երիտասարդ մարսելցիների մի խմբի հետ ամառային արձակուրդներին Հայաստան է գալիս նաեւ ծերունի Արամը, որը 1915 թ. ափսորի ճանապարհին կորցրել է եղբորը՝ Մանուկին, որի հետ ահա տասնամյակներ անց առաջին անգամ պետք է հանդիպի: Հանդիպում, խանդավառություն բեմում, որին հաջորդող պատկերները հանդիսատեսին տեղափոխում են ետ՝ եւ շերտ առ շերտ ներկայացնում Եղեռնի դժնդակ օրերը: Ի վերջո քանսից ծնվում է հաղթանակը:

Համույթին ողջունեց, գոհունակության ու երախտագիտության խոսքեր հղեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը. «Դուք դարձել եք Հայաստան-Սփյուռք յուրօրինակ կամուրջ: Չնայած ձեր համույթը պրոֆեսիոնալ չէ, սակայն ունենալով Վանուշ Խանամիրյանի նման հոգեւոր ղեկավար, դուք մեծ դեր եք սանձնել մեր մշակույթը աշխարհում ներկայացնելու գործում եւ ձեր կատարողական մակարդակը չի տարբերվում պետական պարախմբի մակարդակից»:

Այնուհետեւ նախարարը «Արաֆ-Սասուն» համույթին հանձնեց նախարարության Կոմիտասի անվան ոսկե մեդալի անդրանիկ օրինակը, իսկ պարախմբի ղեկավարներից Պասկալ Շամասյանը պարգեւատրվեց նախարարության պատվոգրով:

«Ազգը» շնորհավորելով համույթին, խնդրեց պրն Շամասյանին հակիրճ ներկայացնել համույթին: «Մենք էլ մեր պարի միջոցով ենք ցանկանում աշխարհին ներկայացնել թե ցեղասպանությունը ինչպես մի հայ ժողովրդի մասնատեց ու աշխարհով մեկ գրեց հարազատներին, որոնցից շատերը մահացան եւ չգտան իրենց կորցրած հարազատներին: Ամեն մեկը այս համերգում իր պապերի ճակատագիրն է տեսնում ու զգում, ապրում այդ դաժան օրերը: 20 տարի առաջ ստեղծեցի համույթ եւ արդեն 10 տարի է ղեկավարում եմ պարախումբը: Այսօր արժանանալով «Կոմիտասի» առաջին ոսկե մեդալին, այն էլ վարդապետի 140-ամյակի տարում, մեծ պատիվ եմ զգում»:

ԺԱՖ-ի նախագահ Ժյուլիեն Տիգրան Հարությունյանն ասաց. «Մենք փորձում ենք ամեն պարի մեջ մի պատմություն ներկայացնել ու դա շատ ոգեւորում է երիտասարդներին, որոնք հայկական մշակույթից բացի ծանոթանում են նաեւ հայոց պատմությանը»:

Ավարտվեց 4-րդ փառատոնը, որի հիշողությունը դեռ երկար կմնա 20 երկրներից ժամանած մոտ 1000 մասնակիցների սրտերում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW PDF.qxd 16/08/2010 19:51 Page 1

Սմբատ Մարգարյանը բավարարվեց բրոնզե մեդալով

Սինգապուրում մեկնարկել են ամառային պատանեկան օլիմպիական առաջին խաղերը: Հայաստանն այդ մրցումներում ներկայացնում են 14 մարզիկներ, որոնք հանդես կգան 12 մարզաձեւում:

Օլիմպիական խաղերում Հայաստանին առաջին մեդալը պարգեւեց Եվրոպայի պատանիների չեմպիոն, Եվրոպայի մեծահասակների առաջնության արծաթե մեդալակիր, ծանրորդ Սմբատ Մարգարյանը: 56 կգ քաշային Սմբատից օլիմպիադայում ոսկե մեդալ էինք ակնկալում: Յավոխ սպասելիքները չարդարացան: 17-ամյա շնորհալի ծանրորդը բավարարվեց բրոնզե մեդալով:

Սմբատը մրցումները սկսեց 105 կգ-ից: Նրա առաջին մոտեցումն անհաջող էր: Միայն 2-րդ փորձից նա բարձրացրեց նախնական քաշը, հետո իրեն ենթարկեց 108 կգ-անոց ծանրաձողը: Այս ցուցանիշով հայ ծանրորդը 3-րդն էր պոկում վարժությունում: Լավագույն արդյունքը ցույց տվեց չինացի Զիավու Հին՝ 117 կգ: Նրան մեկ կիլոգրամով զիջեց վիետնամցի Տուան Կիմ Տաչը:

Սմբատն առաջին վարժությունից հետո զգալիորեն հետ էր մնացել մրցակիցներից, ուստի պետք է ձգտեր կորցրածը հետ վերադարձնել հրում



վարժությունում: Նա մասնակիցներից ամենածանր քաշն էր պատվիրել: Առաջին մոտեցմամբ Մարգարյանը բարձրացրեց 135 կգ: Վիետնամցին իրեն ենթարկեց 134 կգ-անոց ծանրաձողը, իսկ չինացին մրցումները սկսեց 132 կգ-ով: Հայ ծանրորդը սիրտված էր սպասել իր գլխավոր հակառակորդների ելույթներին, որպեսզի կողմնորոշվեր, թե հաջորդ մոտեցման ժամանակ ինչպիսի ծանրություն է պետք բարձրացնել: Վիետնամցի ծանրորդը հրում վարժությունն ավարտեց 140 կգ-ով՝ երկամարտում ցույց տալով 256 կգ: Չինացի ծանրորդը բավարարվեց 137 կգ-ով՝ 3-րդ մոտեցման ժամանակ չկարողանալով հաղթահարել 140 կգ-անոց ծանրաձողը: Նա երկամարտում ցույց տվեց 254 կգ: Օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսին արժանանալու համար հայ ծանրորդին անհրաժեշտ էր բարձրացնել 149 կգ: Յավոխ, դա Սմբատի ուժերից վեր էր: Այսպիսով, երկամարտի 243 կգ (108+135) արդյունքով Սմբատ Մարգարյանը դարձավ բրոնզե մրցանակակիր:

Ծանրամարտի մրցումներում Հայաստանը ներկայացված է առավելագույնը թույլատրվող 2 մարզիկով: Մեր մյուս ներկայացուցիչը՝ գերծանրքաշային Գոռ Մինասյանը մրցահարթակ դուրս կգա օգոստոսի 19-ին:

Մինչեւ 48 կգ քաշային աղջիկների մրցավեճում օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը նվաճեց չինացի մարզուհի Յուան Տիանը: Նա երկամարտում ցույց տվեց 190 կգ (85+105) արդյունք: 2-րդ տեղը գրավեց թայլանդցի Սիրիվիմոն Պրամոնգիոլը՝ 163 կգ (68+95): Բրոնզե մեդալը բաժին հասավ Վենեսուելայի ներկայացուցիչ Գենեսիս Ռոդրիգեսին՝ 154 կգ (71+83):

«Բանանցի» հաղթանակների շարքն ընդհատվեց

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունում բավական թեժ մրցապայքար է ծավալվել չեմպիոնի տիտղոսի համար: Առաջնության 17-րդ տուրի հանդիպումներն ավելի սրեցին ինտրիգը ոսկե մեդալների համար մղվող մրցավեճում:

17-րդ տուրին նախորդել էին Հայաստանի ազգային եւ երիտասարդական հավաքականների մրցախաղերը, ուստի սպասելի էր, որ այդ հանդիպումներին մասնակցած ֆուտբոլիստների մոտ որոշակի հոգնածություն կզգացվի: Այս առումով ավելի ծանր վիճակում էր հայտնվել «Փյունիկը», որի գրեթե ողջ հիմնական կազմի ֆուտբոլիստները մասնակցել էին հավաքականների մրցախաղերին:

«Իմպուլսի» հետ խաղում վնասվածքի պատճառով «Փյունիկից» բացակայում էին Մարկոսն ու Գեւորգ Ղազարյանը: Արդեն 6-րդ րոպեին վնասվածք ստանալով, խաղադաշտը լքեց Հովհաննես Գոհարյանը, իսկ 2-րդ խաղակեսի սկզբում նույն պատճառով փոխարինվեց Կառլեն Մկրտչյանը: Իսկ ահա «Իմպուլսը» սեփական հարկի տակ մարտական կազմով էր խաղադաշտ դուրս եկել: Առաջին խաղակեսի վերջին րոպեին թիմի բազիլացի հարձակվող Էլտոն Կարդոսոն բացեց հաշիվը: «Փյունիկին» մեծ ջանքերի գնով հաջողվեց խուսափել պարտությունից: Թիմի նորեկ Արթուր Բարսեղյանը, որ մինչ այդ խաղում էր «Ուլիսուս», խաղավարտից 6 րոպե առաջ հավասարեցրեց հաշիվը: Հիշեցնենք, որ առաջին շրջանում էլ Դիլիջանում այս թիմերի մրցավեճում գրանցվել էր ոչ-ոքի (0-0):

Տուրի կենտրոնական հանդիպումը «Հրազդանում» կայացած «Ուլիսի» եւ «Բանանցի» մրցավեճն էր: «Բանանցը» մինչ այդ 11 անընդմեջ հաղթանակ էր տոնել, 15 խաղ շարունակ չէր պարտվել: Սակայն «Բանանցն» էլ իր հնարավորություններից ցածր հանդես եկավ: Թիմի գործողություններում չկար նախկին արագությունն ու ուրությունը, լեգեոնականներն էլ ոչնչով աչքի չընկան: Ողջ հանդիպման ժամանակ միայն մեկ վտանգավոր հարված կատարեցին «Բանանցի» ֆուտբոլիստները: Պաշտպան Հովհաննես Համբարձումյանի հեռահար հարվածից հետո գնդակը դիպավ դարպասի ձողին:

«Ուլիսն» էլ առանձնապես վտանգավոր պահեր չստեղծեց: Թվում էր, թե խաղը կավարտվի ոչ-ոքի, սակայն 80-րդ րոպեին փոխարինման դուրս եկած Նորայր Սահակյանը մեկ դիպուկ հարվածով այնքան կարեւոր հաղթանակ պարգեւեց ուլիսցիներին:

Վերջապես «Միկայի» ֆուտբոլիստներին հաջողվեց ընդհատել գոլային երաշտը: «Կիլիկիայի» հետ խաղում «Միկան» հաղթեց խոշոր՝ 4-1 հաշվով: Գոլերի հեղինակներ դարձան Ժունիորը, Բոշի Դեմելը, Էդնեյն ու Ալեքսանդր Թադեւոսյանը: «Կիլիկիայից» միակ գոլը խփեց Սամվել Պետրոսյանը: Նախորդ տուրում «Միկայի» ղեկը սանձնած Արմեն Շահգելդյանի գլխավորությամբ թիմն առաջին հաղթանակը տոնեց:

Գյումրիի «Շիրակը» նոր սեփականատեր ունեցավ, որի շնորհիվ թիմն ասիճանաբար դուրս է գալիս ֆինանսական ճգնաժամից: Իսկ ահա խաղային ճգնաժամը շարունակվում է: Գյումրեցիներին ոչ մի կերպ չի հաջողվում միավոր վաստակել: Հերթական խաղում էլ սեփական հարկի տակ թիմը 0-2 հաշվով պարտվեց «Գանձասարին», որին հաղթանակ պարգեւեցին Դավիթ Խանիշվիլու եւ Արթուր Քոչարյանի խփած գոլերը: «Շիրակը» 8-րդ անընդմեջ պարտությունը կրեց: Թիմը հայտնվել է չափազանց ծանր իրավիճակում եւ միայն հրաշք կարող է օգնել գյումրեցիներին բարձրագույն խմբում տեղը պահպանելու համար:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Բանանց	17	13	2	2	41-15	41
2. Ուլիս	17	12	2	3	29-9	38
3. Փյունիկ	17	11	3	3	41-15	36
4. Միկա	17	7	4	6	26-18	25
5. Իմպուլս	17	6	3	8	15-30	21
6. Գանձասար	17	6	1	10	15-25	19
7. Կիլիկիա	17	4	1	12	17-37	13
8. Շիրակ	17	1	0	16	10-45	3

Ռմբարկուներ

Էդուարդո դո Սանթոս	«Բանանց»	11
Գեւորգ Ղազարյան	«Փյունիկ»	10
Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	9
Սամվել Մելքոնյան	«Բանանց»	7
Կարեն Խաչատրյան	«Կիլիկիա»	6

Աշոտ Դանիելյանը մրցաշարի հաղթող

Ստեփանակերտցի սամբիստ, 74 կգ քաշային Աշոտ Դանիելյանը գերազանց հանդես եկավ Ղազախստանի Ուրալսկ քաղաքում կայացած այդ երկրի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւի մրցանակների խաղարկությունում՝ կանգնելով պատվո պատվանդանի առաջին աստիճանին: Աշոտը հաղթեց իր բոլոր մրցակիցներին:

Այս մրցաշարը սամբոյի աշխարհի գավաթի խաղարկության փուլերից մեկն է, որին մասնակցեցին 16 երկրների ներկայացուցիչներ: Մրցաշարը մեր սամբիստի համար ուժերի լավ ստուգատես էր Տաշքենդում նոյեմբերին կայանալիք սամբոյի աշխարհի առաջնությունից առաջ: Հիշեցնենք, որ Դանիելյանն այս տարի նվաճել էր նաեւ մարտական սամբոյի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Լավագույնը Զավեն Անդրեասյանի արդյունքն է

Հունաստանում ընթացող շախմատի մրցաշարի 4 հայ մասնակիցներից առավել հաջող է խաղում գրոսմայստր Զավեն Անդրեասյանը: Նա 7 տուրից հետո վաստակել է 6 միավոր եւ ընթանում է 2-րդ տեղում: Ըստ մրցումների պաշտոնական կայքի, Անդրեասյանը մրցաշարը սկսեց 5 անընդմեջ հաղթանակներով՝ պարտության մատնելով Գեորգի Գրաչոյային, Նելլի Աղինյանին, Սունդար Շյամին, Անդրեյ Ռիչագովին եւ Աթանասիոս Մաստրովասիլիսին:

Միայն 6-րդ տուրում Զավենի հաղթաշավը հաջողվեց կասեցնել թուրք Սուաթ Աթալիկին՝ ոչ-ոքի ավարտելով մրցավեճը: 7-րդ տուրում էլ Զավենը հաշտություն կնքեց հույն Իոանիս Պապաիոանուի հետ:

Առաջատարների թվում է նաեւ Վահե Բաղդասարյանը, որը 7 հնարավորից վաստակած 5,5 միավորով 11-րդ տեղում է: Վահեն ընդամենը մեկ պարտություն է կրել՝ 2-րդ տուրում զիջելով Մորթեզ Մահջուբին: 5 միավորով 29-րդ տեղում է Էլինա Դանիելյանը, իսկ 69-րդ հորիզոնականը զբաղեցնող Նելլի Աղինյանը 4 միավոր է վաստակել: Մրցաշարի առաջատարը թուրք Սուաթ Աթալիկն է, որն ունի 6,5 միավոր:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ

Մեկնարկեց շախմատի համահայկական օլիմպիադան

Օգոստոսի 14-ին Երեւանում «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական մշակութային փառատոնի շրջանակներում մեկնարկեց շախմատի երիտասարդական համահայկական առաջին օլիմպիադան, որը ՀՀ սփյուռքի նախարարության եւ Հայաստանի շախմատի ակադեմիայի համատեղ ծրագիրն է: Ամիսներ առաջ նախարարության եւ ակադեմիայի միջեւ ստորագրվել էր համատեղ ծրագրեր իրականացնելու հուշագիր, որի առաջին ծիլը մեկնարկած օլիմպիադան է: Բացման արարողությունը կայացավ ակադեմիայի բակում, որին ներկա էր նաեւ ՀՀ նախագահ, շախմատի ֆեդերացիայի նախագահ Սերժ Սարգսյանը: Օրհներգի հնչյունների ներքո 12 երկրներից ժամանած 40 շախմատիստներ, որոնց թվում էին 11 գրոսմայստրներ (3 կին եւ 8 տղամարդ), 10 միջազգային վարպետներ (3 կին եւ 7 տղամարդ), 7 ՖԻԴԵ-ի վարպետներ (3 կին եւ 4 տղամարդ), կազմելով 10 թիմեր, մտան հրապարակ ու բեմում զբաղեցրին իրենց պատվավոր տեղը: ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ողջունելով շախմատիստներին, նշեց. «Օլիմպիադայի անցկացումը նոր ազդակ կլինի Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման եւ հայ երիտասարդության շրջանում շախմատը ներկայացնելու, Հայաստանի շախմատային ավանդույթները տարածելու, շախմատի օգնությամբ Հայաստան-Սփյուռք մարզական երիտասարդական կապերի զարգացման համար»: Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր տնօրեն, ՀՀ շախմատի ֆեդերացիայի առաջին փոխնախագահ **Սմբատ Լալուայանը** ողջունեց ու հաղթանակներ մաղթեց աշխարհի տարբեր երկրներից ժամանած հայ շախմատիստներին, որոնցից շատերն առաջին անգամ են լինում մայր հայրենիքում ու ավելացրեց. «Դուք եք մեր երկրի պատիվն ու պարծանքը, դուք եք, որ շարունակելու եք աշխարհի թիվ 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի հաղթանակած ուղին եւ մենք ձեզ հետ մեծ հույսեր ենք կապում: Բարի երթ ձեզ»: Այնուհետեւ շախմատային տախտակի վրա առաջին քայլն անելու պատիվը տրվեց Ամերիկայից ամենաերիտասարդ մասնակից, 10 տարեկան Սամուել Սեյանին: Գե-

ղարվեստական մի քանի համարներից հետո հայ շախմատիստները խմբվեցին ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանի** շուրջը ու ստացան նրա բարեմաղթանքները. «Դե տեսնեմ ինչպես եք խաղալու», ասաց նախագահը ու հրաժեշտ տվեց:

«Ազգը» զրուցեց Սամուելի հետ ու տեղեկացավ, որ նա շախմատ է խաղում 5 տարեկանից եւ Կալիֆորնիայում (ԱՄՆ) հասել է մեծ հաջողությունների մեկ տարի անց: Տարին մի քանի անգամ մասնակցելով միջազգային մրցաշարերի, նա արդեն վարկանիշը հասցրել է 2160-ի: Ամերիկայի շախմատի չեմպիոն Սամուելը (մինչեւ 10 տարեկանների խմբում) նշեց. «Այս մրցաշարը չնայած դժվար է լինելու, բայց ամեն ինչ կանեմ, որպեսզի հաղթեմ: Հայաստանը շատ եմ սիրում եւ ուրախ եմ, որ մասնակցում եմ այս օլիմպիադային»:

Տեղեկացնենք, որ օլիմպիադան հովանավորել են Հայաստանում ֆրանսիացիների միության նախագահ Ռայմոնդ Եզեկելյանը, հայկական բարեգործական ընդհանուր միությունը եւ «Արմավիա» ավիաընկերությունը: Վերջինս հոգացել է շախմատիստների երկկողմանի ուղեւորությունը: Մրցանակային ֆոնդը կազմում է 21.700 ամերիկյան դոլար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Արդյունավետ տուր

Շախմատի համահայկական առաջին օլիմպիադայի մեկնարկային տուրը բավական արդյունավետ էր: Կայացած 20 պարտիաներից միայն 5-ում գրանցվեց ոչ-ոքի արդյունք: Հաշտություն կնքած շախմատիստներից մեկը մրցաշարի ամենաբարձր անհատական վարկանիշ ունեցող Տիգրան Պետրոսյանն էր (2597), որը սպիտակներով խաղում էր Եվգենիա Դոլուխանովայի հետ: Ոչ-ոքիով մրցաշարը սկսեց նաեւ բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը՝ միավորը կիսելով Դիանա Հարությունովայի հետ պարտիայում:

Պարտություն կրեց մրցաշարի ամենակրտսեր մասնակից, 10-ամյա Սամուել Սեյանը՝ զիջելով Գոռ Հայրապետյանին: Հաղթանակներ տոնեցին նաեւ Դավիթ Հարությունյանը, Տիգրան Քոթանջյանը, Վիգեն Միրումյանը, Դավիթ Պետրոսյանը, Յուրի Հայրապետյանը, Անդրանիկ Մատիկոզյանը, Պողոս Նահապետյանը, Նարեկ Սեֆերջյանը, Գեւորգ Հայրապետյանը, Արման Հայրապետյանը, Նիկիտա Մատինյանը, Մանվել Պողոսյանը, Հովիկ Հայրապետյանը եւ Սիրանուշ Անդրեասյանը:

Սյուզի Քենտիկյանին ընդունեց սփյուռքի նախարարը

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Գերմանիայից Երեւան ժամանած WBA, WIBF եւ WBO վարկածներով գերթեթեւ քաշային կարգում բռնցքամարտի աշխարհի չեմպիոն, հայազգի Սյուզի Քենտիկյանին եւ նրա մենեջեր, գերմանացի Քրիստոֆ Վեբեին: Նախարարը ողջունեց հյուրերին եւ ասաց, որ շնորհակալ է Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը, որ օտարերկրացիներին հնարավորություն է տալիս այնպիսի հաջողությունների հասնել, ինչպես դա արել է Սյուզի Քենտիկյանը: Պարոն Վեբեն նշեց, որ Գերմանիայի քաղաքական էլիտան հետաքրքրված է հայուհի բռնցքամարտիկով եւ որ ինքը՝ որպես Սյուզիի մենեջեր, շահագրգռված է, որ վերջինս հնարավորությունների սահմաններում մասնակցի նաեւ Հայաստանում կազմակերպված ծրագրերի՝ այդպիսով ամրապնդելով Հայաստան-Գերմանիա կապերը:

Քննարկվեց «Հայաստանի կյանքի ծառ» (Lebensbaum Armenien) նախագիծը, որի մասն է կազմում նաեւ Սյուզի Քենտիկյանը: Առաջարկվում էր նախագծում ընդգրկել ոչ միայն Հայաստանը, այլեւ ամբողջ աշխարհի հայությունը: Նախարար Հ. Հակոբյանը ողջունեց նաեւ Սյուզի Քենտիկյանի համար Երեւանում բռնցքամարտի մենամարտ կազմակերպելու միտքը: Հանդիպման վերջում ՀՀ սփյուռքի նախարարը հյուրերին հրավիրեց մասնակցել «Արի տուն 2010» ծրագրի 4-րդ խմբի մեկնարկի համար կազմակերպված միջոցառմանը:

Մ. Մ.

էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 16/08/2010 20:47 Page 1

Երեւան են ժամանում վեց նախագահներ

Նախատեսվում են փոփոխություններ հայ-ռուսական ռազմական գործակցությունում

Օգոստոսի 20-ին Երեւանում կմեկնարկի Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ երկրների ղեկավարների երկօրյա ոչ պաշտոնական հանդիպումը: Ըստ նախնական տեղեկությունների՝ մեր երկիր կժամանեն ՀԱՊԿ անդամ 7 երկրներից 6-ի նախագահները. Ուզբեկստանի ղեկավար **Իսլամ Քարիմովը** հայտարարել է, որ ինքը չի մասնակցի դաշնակիցների հանդիպմանը: Բելառուսի առաջնորդ **Ալեքսանդր Լուկաշենկոն** հաստատել է իր մասնակցությունը, ինչը որոշ լրատվամիջոցների հիմք է տվել կարծելու, որ Երեւանում կկայանա Մեդվեդեւ-Լուկաշենկո «եղբայրական» հանդիպումը, սակայն, ինչպես փոխանցում է ռուսական «Կոմերսանտ» թերթը, Մեդվեդեւը չի նախատեսում հանդիպել Լուկաշենկոյին համենայն դեպս Հայաստանի մայրաքաղաքում: Ռուս-բելառուսական հարաբերություններում սառնությունը արդեն տեւական ժամանակ նկատելի է. ոմանց համոզմամբ պատճառը «կաթնային սկանդալն էր», ոմանք էլ պնդում են, որ այս ամենի հիմքում Մինսկի՝ տված խոստումը չկատարելն է, այն է՝ ճանաչել Սուխումի եւ Ցխինվալի անկախությունները. Լուկաշենկոն մինչեւ այսօր խուսափում է այդ քայլից:

Ինչեւէ, երկու սլավոնական երկրների խնդիրներն ամենեին էլ կարեւորագույնը չեն առաջիկա ոչ պաշտոնական գագաթաժողովում: Հայերիս համար առաջնայինն, անշուշտ, այն տեղեկություններն են, որ Երեւանում նախագահներ Սարգսյանն ու Մեդվեդեւը կստորագրեն արձանագրություն, որով փոփոխություններ կմտցնեն 1995-ին ստորագրած ռուս-հայկական պայմանագրում: «Ազատություն» ռադիոկայանը, վկայակոչելով դիվանագիտական աղբյուրներ, տեղեկացնում է, որ համաձայն վերոհիշյալ փոփոխությունների՝ Հայաստանում ռուսական ռազմաբազաների տեղակայումը 25 տարվա փոխարեն երկարաձգվում է մինչեւ 49 տարի՝ սկսած 1995-ից: Ինչպես արդեն տեղեկացրել էր «Ազգը» հուլիսի 31-ի համարում, մեկ այլ էական փոփոխությամբ նախատեսվում է, որ հայ-ռուսական «նոր համաձայնությամբ» «ռուսական ռազմակայանը, ՌԴ շահերի պաշտպանությունից բացի, ՀՀ զինված ուժերի հետ աղահովելու է նաեւ ՀՀ անվտանգությունը՝ տրամադրելով վերջինիս ժամանակակից ռազմական տեխնիկա եւ սպառազինություն»: Հիշեցնենք, հուլիսի 31-ի համարում մեր թերթը ընդգծել էր, որ այս մասին ՌԴ նախագահին դիմել է Պուտինի ղեկավարած կառավարությունը, ընդ որում՝ պայմանագրում փոփոխություններ կատարելու առաջարկության մեջ նշված է, որ «49 տարին լրանալուց հետո պայմանագիրը երկարաձգվում է եւս հինգ տարով, եթե կողմերից ոչ մեկը հերթական ժամկետը լրանալուց ոչ պակաս, քան 6 ամիս առաջ գրավոր կերպով չի տեղեկացնում պայմանագիրը դադարեցնելու իր մտադրության մասին»: Անշուշտ, այս հարցերը պետք է քննարկվեն երեւանյան գագաթաժողովի ընթացքում նախատեսված բազմակողմ ու երկկողմ մի շարք հանդիպումներում, որոնք, բացի մայրաքաղաքից, կկայանան նաեւ Սեւանում:

Մեկ այլ «կարեւոր հարց». Ղրղզստանը Երեւանում կներկայացնի նորընտիր նախագահ Ռոզա Օթունբաեւան: Արդեն իսկ համաձայնվեցված է, որ կստեղծվի փորձագետների 50-հոգանոց խումբ, որի կազմում կլինին մասնագետներ ՀԱՊԿ անդամ բոլոր երկրներից՝ այդ թվում՝ Հայաստանից: Խումբը կմեկնի Ղրղզստան, կտեղակայվի Օշում եւ կօժանդակի «միջէթնիկական բախումների պատճառների բացահայտման գործընթացին»: Բացառված չէ, որ ՀԱՊԿ խորհրդատվական-փորձագիտական խումբը կսկսի աշխատանքը Ղրղզստանում ԵԱՀԿ ոստիկանների հետ համատեղ, իսկ վերջիններիս ժամանումը Ղրղզստան նախատեսվում է սեպտեմբերին: Հիշեցնենք նաեւ, որ Ղրղզստանի բնակիչները, հատկապես երիտասարդությունը, իրենց բողոքի ակցիաներով հայտարարել էին, որ դեմ են ԵԱՀԿ ոստիկանների մուտքին իրենց երկիր:

Հայաստանի մայրաքաղաքում ՀԱՊԿ երկրների ղեկավարները կքննարկեն նաեւ տարածաշրջանային անվտանգության այլ խնդիրներ, այդ թվում՝ արդի մարտահրավերներ եւ սպառնալիքների հակազդեցության հետ կապված հարցերում ՀԱՊԿ անդամ-երկրների փոխգործակցությունը:

Հ. ԱՓՅԱՆ

Հանգանակություն Լիբանանի բանակի համար

Լիբանանի պաշտպանության նախարար Էլիաս Մուրը հայտարարել է, որ երկրի իշխանությունները բանկային հաստուկ հաշիվ են բացել նվիրատվությունների համար, որոնք կօգտագործվեն բանակային արդիական սպառազինությունների գնման նպատակով:

BBC-ն մեջբերում է նախարարի այն խոսքերը, որ ինքը եւ իր հայրը (պաշտպանության նախկին նախարար) նորաբաց հաշվին արդեն փոխանցել են 670 հազար դոլար:

Նման անսովոր քայլի պատճառն այն է, որ ամերիկացի օրենսդիրները շրջափակել են Լիբանանին 100 մլն դոլարի ռազմական օգնություն հատկացնելու օրինագիծը՝ վախենալով, որ օգնությունը կարող է օգտագործվել ընդդեմ Իսրայելի:

Օգոստոսի 3-ին լիբանանա-իսրայելական սահմանում տեղի ունեցած բախման ժամանակ 4 մարդ էր սպանվել:

Բանակի վերազինմանը ծառայող հաշվեհամարի բացման կապակցությամբ Մուրը հույս է հայտնել, որ ֆինանսական օգնություն կստացվի ինչպես Լիբանանի բնակիչներից, այնպես էլ արտերկրում ապրող միլիոնավոր լիբանանցիներից:

Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանը անցյալ շաբաթ հայտարարեց, որ օգոստոսի 2-ին ինքն օգտվել էր Լիբանանի բանակին օգնության հատկացումը կասեցնելու իրավունքից: Բերմանն ավելացրեց, որ երկյուղներ կան, թե «Հզբոլլահ» ռազմականացված խմբավորումը կարող է ազդել բանակի վրա, եւ որ օգնության միջոցներով գնվելիք զենքը կարող է օգտագործվել Իսրայելի դեմ:

Լիբանանի պաշտպանության նախարարը իր հերթին հայտարարել է, որ իր երկիրը չի ընդունի ԱՄՆ-ի օգնությունը, եթե դրա հատկացումն ուղեկցվի այն պայմանով, թե «օգնությունը չի կարող օգտագործվել երկրի տարածքի, ժողովրդի եւ սահմանների պաշտպանության համար»:

Ի դեպ, Լիբանանի բանակին աջակցելու պատրաստակամություն են հայտնել Իրանը եւ Սիրիան, որոնք երկուսն էլ «Հզբոլլահ» խմբավորման համակիրներ են:

Երուսաղեմում վերացնում են հրեաներին արաբներից զատող պատը

Իսրայելի բանակը սկսել է ապամոնտաժել Արեւելյան Երուսաղեմում հրեական Գիլո թաղամասը արաբական Բեյթ-Ջալ թաղամասից անջատող պարիսպը: «Հաարեց» թերթը տեղեկացնում է, որ երկուսուկես տարիներ առաջ կառուցվել էր Գիլոյի բնակիչներին գնդակոծություններից պաշտպանելու նպատակով: Հիմա իշխանությունները որոշել են, որ հրեա բնակիչներն ապահով վիճակում են:

2000-2002 թթ., երբ պաղեստինցիների եւ Իսրայելի զինված հակամարտությունը կտրուկ սրվել էր, Գիլոն քանիցս թիրախ էր դարձել նշանառական հրացանների եւ գնդացիրների կրակի համար:

Պատն ապամոնտաժելու որոշումը հարուցել է տեղաբնակների դժգոհությունները, որոնք կարծում են, թե բանակն իրենց թողնում է անպաշտպան:

Բանակային հրամանատարության ներկայացուցիչները պնդում են, թե նոր գնդակոծությունների վտանգ գոյություն չունի: Միաժամանակ նշվում է, որ անհրաժեշտության դեպքում պարիսպը կարելի է վերականգնել:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ

Քանտարկյալների փոխանակում Ադրբեջանի ու Իրանի միջեւ

Իսրայելը բացատրություն է պահանջում Բաքվից

Բաքվում Իսրայելի դեսպանատան վրա հարձակման փորձի համար ձերբակալվել էին երկու լիբանանցիներ՝ Նաջմեդին Ալի Հուսեինն ու Ալի Մուհամմադը: Ինչպես տեղեկացնում են իսրայելական լրատվամիջոցները, Լիբանանի այս քաղաքացիները «ահաբեկչական «Հզբոլլահ» կազմակերպության անդամներ են, որոնք պատրաստվում են իսրայելական դեսպանատան պայթյունով վրեժ լուծել Իմադ Մուգնիեի մահվան համար»: Ադրբեջանի ոստիկանությունը, սակայն, ձերբակալել էր լիբանանցիներին, իսկ դատարանը դատապարտել 15-ական տարվա ազատազրկման: Միեւնույն ժամանակ ադրբեջանական բանտերում նույն գործի պատճառով ազատազրկված էին 12 իրանցիներ, որոնք, ըստ տեղեկությունների, եղել են լիբանանցիների հանցակիցները: Ադրբեջանական Trend գործակալությունը օգոստոսի 13-ին տեղեկություն տարածեց, որ երկու լիբանանցիներն ու իրանցիները... արտաքսվել են Իրան: Բանն այն է, որ Բաքուն ու Թեհրանը ձեռք են բերել դատապարտյալների փոխանակման պայմանավորվածություն. Իրանն իր հերթին խոստացել է ազատ արձակել այդ երկրում իրենց պատիժը կրող երկու ադրբեջանցի դիվանագետների, որոնք ձերբակալվել են թմրանյութերի վաճառքի համար, ինչպես նաեւ մեկ գիտնականի, որ էլ իր հերթին, ըստ մեղադրանքի, Իրանում լրտեսությամբ է զբաղվել հօգուտ Ադրբեջանի:

Իրանի հետ դատապարտյալների փոխանակման տեղեկությունները չի հաստատել Ադրբեջանի քրեակատարողական վարչության մամլո քարտուղարը. «Այդ տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը»: Ադրբեջանի դատախազությունից հնչել է լրիվ այլ հայտարարություն. դատախազության ներկայացուցիչ Զաֆար Գաբարովը Trend-ին հաղորդել է, որ Ադրբեջանն Իրանին է փոխանցել միայն 12 իրանցի դատապարտյալներին. «Իսկ լիբանանցիները շարունակում են մնալ ադրբեջանական բանտում», նշել է Գաբարովը: Մինչդեռ նույն լրատվամիջոցը վաղորդ հայտարարել էր, որ օգոստոսի 8-ին ինքնաթիռով Բաքվից Իրան են արտաքսվել Ալի Հուսեինն ու Ալի Մուհամմադը: Որ լիբանանցիներն այնուամենայնիվ փոխանցվել են Իրանին ապացուցվում է այն հանգամանքով, որ Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը պահանջել է Բաքվում Իսրայելի դեսպանից՝ «անհապաղ բացատրություններ պահանջել Ադրբեջանի իշխանություններից կատարվածի առնչությամբ»: Իր հերթին «Հզբոլլահը» ոչ մի կերպ չի մեկնաբանել իրադարձությունը: Իսկ Ադրբեջանի իշխանություններից, եթե հնչում են բացատրություններ, ապա, ինչպես միշտ, խիստ հակասական:

Հ. Ա.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարում է մրցույթ՝ քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններն զբաղեցնելու համար: Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները անհրաժեշտ տեղեկություններ ստանալու, պաշտոնի անձնագրին եւ հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ պաշտպանության նախարարություն (Երեւան, Բագրեւանդի 5, հեռ. 29-46-39):

Մրցույթի թափուր պաշտոնների ցանկը եւ հարցաշարերը տեղադրված են նաեւ ՀՀ ՊՆ www.mil.am պաշտոնական կայքի «ՊՆ ՔՀՇ թափուր պաշտոնների մրցույթ» բաժնում եւ տպագրված են ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» պաշտոնաթերթում (թիվ 30):

ՀՀ ՊՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԲ խորհրդի նիստում

Կենտրոնական բանկի խորհուրդը օգոստոսի 13-ի նիստում, որը վարում էր ԿԲ նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, հաստատեց «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության խորհրդի անդամների փոխհատուցման չափը եւ կարգը, «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության կողմից գանձվող անդամավճարների եւ անդամավճարները չվճարելու համար գանձվող տույժի չափերը:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Շաբաթական ամփոփ տվյալներ

Օգոստոսի 9-ից 13-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 60,835,116 ԱՄՆ դոլար՝ 365.50 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 69,238,450 ԱՄՆ դոլար՝ 367.02 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 15,960,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 367.54 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Նույն ժամանակահատվածում միջբանկային շուկայում իրականացվել է 2,400,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 366.39 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Օգոստոսի 2-ից 8-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 16.2 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 42.9 մլն ԱՄՆ դոլար:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

Coming Soon

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝16.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: